ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՄԱՎԻՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ամփոփիչ հաշվետվություն

AM PARTNERS ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

22 Սեպտեմբեր, 2021

Բովանդակություն

1 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ 2

1.1 ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ 2

1.2 ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 13

1.2.1 Արմավիրի մարզ 14

1.2.1.1 ԱՐՄԱՎԻՐ համայնք 14

1.2.1.2 ԲԱՂՐԱՄՅԱՆ համայնք 17

1.2.1.3 ՄԵԾԱՄՈՐ համայնք 19

1.2.1.4 ԱՐԱՔՍ համայնք 21

1.2.1.5 ԽՈՅ համայնք 23

1.2.1.6 ՎԱՂԱՐՇԱՊԱՏ համայնք 25

1.2.1.7 ՓԱՐԱՔԱՐ համայնք 27

1.2.2 Արարատի մարզ 29

1.2.2.1 ԱՐՏԱՇԱՏ համայնք 29

1.2.2.2 ՄԱՍԻՍ համայնք 31

1.2.2.3 ՎԵԴԻ համայնք 33

1.2.2.4 ԱՐԱՐԱՏ համայնք 36

1.3 ԱՄՓՈՓՈՒՄ 37

1 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

2021թ.-ի վերջին **ՀՀ Կառավարությունը նախատեսում է ավարտել վարչատարածքային բարեփոխումների գործընթացը** Հայաստանում: Այդ նպատակով պլանավորվում է **միավորել մոտ 436 համայնք** երկրի **9 մարզերում՝** ստեղծելով **36 միավորված համայնք**: Գործընթացի վերաբերյալ միավորվող համայնքների բնակիչների կարծիքի ուսումնասիրության նպատակով ՀՀ Կառավարությունը նախաձեռնել է հանրային լսումներ: Հանրային լսումների կազմակերպման և անցկացման հանձնառությունը ստանձնել է **Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը** (ՀՏԶՀ), որն այդ առաջադրանքի իրագործման համար ներգրավել է անկախ կազմակերպություն՝ ի դեմս **AM Partners** խորհրդատվական ընկերության[1] (Խորհրդատու): Սույն հաշվետվությունը վերաբերվում է **Արմավիրի** և **Արարատի մարզերում** անցկացված հանրային լսումներին:

1.1 ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Արմավիրի մարզում նախատեսվում է կազմավորել **7 միավորված համայնքներ**, որոնցում կներառվեն **96 համայնքներ**: Արարատի մարզում նախատեսվում է կազմավորել **4 միավորված համայնքներ**, որոնցում կներառվեն **94 համայնքներ**: Ստորև ներկայացված են ապագա միավորված համայնքների և նրանց կազմի մեջ մտնող համայնքների ցանկը.

Աղյուսակ 1 - Արմավիրի և Արարատի մարզերում միավորված համայնքների և նրանց կազմի մեջ մտնող համայնքների ցանկը

#	Միավորված համայնք	Միավորվող համայնքներ	Միավորվող համայնք-ների թիվ
ԱՐՄԱՎԻՐԻ մարզ			
1	Արմավիր	ք. Արմավիր, Այգևան, Արաքս, Լենուղի, Լուկաշին, Խանջյան, Հացիկ, Մայիսյան, Մյասնիկյան, Նորավան, Սարդարապատ	11
2	Բաղրամյան	Բաղրամյան, Արգինա, Արևադաշտ, Արտամետ, Բագարան, Դալարիկ, Երվանդաշատ, Լեռնագոգ, Կողբավան, Հուշակերտ, Շենիկ, Վանանդ, Տալվորիկ, Քարակերտ	14
3	Մեծամոր	Մեծամոր, Ալաշկերտ, Ակնալիճ, Ամասիա, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արևիկ, Արմավիր, Արտաշար, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Նորապատ, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Տարոնիկ, Փշատավան	31
4	Արաքս	Ջրառատ, Ակնաշեն, Ապագա, Առատաշեն, Արաքս (Էջմիածնի շրջ.), Արտիմետ, Գայ, Գրիբոյեդով, Լուսագյուղ, Խորոնք, Հայկաշեն, Մեծամոր, Ջրարբի	13
5	Խոյ	Գեղակերտ, Աղավնատուն, Ամբերդ, Այգեշատ, Արագած, Արշալույս, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Ծաղկալանջ, Ծաղկունք, Ծիածան, Հայթաղ, Հովտամեջ, Մոնթեավան, Մրգաստան, Շահումյան	17
6	Վաղարշապատ	ք. Էջմիածին, Ոսկեհատ	2
7	Փարաքար	Փարաքար, Այգեկ, Արևաշատ, Բաղրամյան (Էջմիածնի շրջ.), Մերձավան, Մուսալեռ, Նորակերտ, Պտղունք	8

[1] www.ampartners.am

#	Միավորված	Միավորվող համայնքներ	Միավորվող
ԱՐԱՐԱՏԻ մարզ			
1	Արտաշատ	ք. Արտաշատ, Աբովյան, Ազատավան, Այգեզարդ, Այգեպատ, Այգեստան, Արաքսավան, Արևշատ, Բաղրամյան, Բարձրաշեն, Բերդիկ, Բերքանուշ, Բյուրավան, Բուրաստան, Գետազատ, Դալար, Դեղձուտ, Դիմիտրով, Դիտակ, Դվին, Լանջազատ, Կանաչուտ, Հնաբերդ, Հովտաշեն, Մասիս, Միչյան, Մրգանուշ, Մրգավան, Մրգավետ, Նարեկ, Նշավան, Նորաշեն, Շահումյան, Ոստան, Ջրաշեն, Վարդաշեն, Վերին Արտաշատ, Քաղցրաշեն	38
2	Մասիս	ք. Մասիս, Այնթապ, Ազատաշեն, Արբաթ, Արգավանդ, Արևաբույր, Գեղանիստ, Գետափնյա, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Ջորակ, Խաչփար, Հայանիստ, Հովտաշատ, Ղուկասավան, Մարմարաշեն, Նիզամի, Նոր Խարբերդ, Նոր Կյուրին, Նորաբաց, Նորամարգ, Ջրահովիտ, Ռանչպար, Սայաթ-Նովա, Սիս, Սիփանիկ	27
3	Վեդի	ք. Վեդի, Այգավան, Արալեզ, Գինեվետ, Գոռավան, Դաշտաքար, Եղեգնավան, Լուսաշող, Լուսառատ, Նոր Կյանք, Նոր Ուղի, Ոսկետափ, Ուրցաձոր, Սիսավան, Վանաշեն, Տափերական, Փոքր Վեդի	17
4	Արարատ	ք. Արարատ, գ. Արարատ, Ավշար, Արմաշ, Երասխ, Զանգակատուն, Լանջառ, Նոյակերտ, Պարույր Սևակ, Սուրենավան, Վարդաշատ, Ուրցալանջ	12

Նշված միավորված համայնքներում կազմակերպվել և անցկացվել է **11 հանրային լսում**՝ յուրաքանչյուր համայնքում՝ 1-ական: Հանրային լսումներն անցկացվել են **միավորված համայնքների կենտրոնում** կամ **դրանց կազմի մեջ մտնող համայնքներից մեկում**: Հանրային լսումների անցկացման վայրերն ընտրվել են այն նկատառումով, որ **տեղերում լինեն դահլիճներ**, որոնք բավարար մեծ են (մինչև 150 նստատեղերով) և կահավորված են տեխնիկական միջոցներով (բարձրախոսներով):

Հանրային լսումներին քաղաքացիներին հրավիրելու հարցում **կազմակերպչական աջակցություն** են ցուցաբերել ՀՀ Արմավիրի և Արարատի մարզպետարանները: Հանրային լսումներին մասնակցելու համար հրավիրվել են միավորված համայնքների կազմի մտնող **բոլոր համայնքների բնակիչները**, յուրաքանչյուր համայնքից **առնվազն 3-4 ներկայացուցիչ**, որոնք ներկայացնում են հանրության հետևյալ խմբերը.

- գործող կամ նախկին համայնքապետեր,
- համայնքների ավագանու անդամներ,
- համայնքապետարանի աշխատակիցներ,
- մտավորականության ներկայացուցիչներ,
- խոշոր գործարարներ և ֆերմերներ,
- համայնքում կարծիքի լիդերներ (դպրոցի, մանկապարտեզի, հիվանդանոցի տնօրեն, ամբուլատորիայի վարիչ),
- համայնքային սոցիալական աշխատող,
- տեղական քաղհասարակության կազմակերպությունների և ՀԿ-ների ներկայացուցիչներ,
- տեղական ԶԼՄ-ների ներկայացուցիչներ,
- այլ ցանկություն հայտնողներ:

Հանրային լսումներին մասնակցել են նաև ՀՏԶՀ-ի ներկայացուցիչներ, մարզպետարանների պաշտոնյաներ:

Արմավիրի և Արարատի մարզերում անցկացված 11 հանրային լսումներին, ընդհանուր առմամբ, **մասնակցել են 850 քաղաքացիներ**:

Լսումների ընթացքում հանրությանը ներկայացվել են վարչատարածքային բարեփոխումների գործընթացը, համայնքների միավորման սկզբունքներն ու առանձնահատկությունները, համայնքների միավորման արդյունքում ստեղծվող հնարավորությունները, հանրային կառավարման ապակենտրոնացման ուղղությամբ սպասվող բարեփոխումները: Թեմայի վերաբերյալ **հիմնական զեկուցող** է հանդես եկել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ **Աշոտ Գիլոյանը**:

Արմավիրի և Արարատի մարզերում անցկացված հանրային լսումների հիմնական տվյալները՝ անցկացման վայրերը, ժամանակացույցը, մասնակիցների թիվն ու կազմը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 2 - Արմավիրի և Արարատի մարզերում անցկացված հանրային լսումների ժամանակացույցը և մասնակիցների թիվն ու կազմը

#	Միավորված համայնք	Հանրային լսումների անցկացման...		Հանրային լսումների մասնակիցների թիվը	այդ թվում՝							
		վայրը	օրը		*մարզպետարանի ներկայացուցիչներ*	*համայնքապետեր և նրանց տեղակալներ*	*համայնքների ավագանու անդամներ*	*համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքային ծառայողներ*	*նախակրթական, կրթական և մշակութային հաստատությունների աշխատակիցներ*	*առողջապահական հաստատությունների աշխատակիցներ*	*տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներ*	*ֆերմերներ, համայնքների այլ բնակիչներ*
ԱՐՄԱՎԻՐԻ մարզ												
1	Արմավիր	ք. Արմավիր	14.09.2021.	**136**	*3*	*9*	*14*	*13*	*42*	*25*	*5*	*25*
2	Բաղրամյան	գ. Քարակերտ	14.09.2021.	**71**	*1*	*7*	*11*	*20*	*7*	*5*		*20*
3	Մեծամոր	ք. Մեծամոր	14.09.2021.	**155**	*2*	*14*	*20*	*10*	*5*	*3*	*2*	*99*
4	Արաքս	գ. Ջրարբի	15.09.2021.	**38**	*1*	*14*	*4*	*6*	*9*			*4*
5	Խոյ	գ. Աղավնատուն	15.09.2021.	**83**	*2*	*13*	*14*	*12*	*14*	*2*		*26*
6	Վաղարշապատ	ք. Էջմիածին	15.09.2021.	**104**	*2*	*2*	*3*	*17*	*26*	*6*	*1*	*47*
7	Փարաքար	գ. Փարաքար	16.09.2021.	**44**	*1*	*9*	*1*	*16*	*13*	*1*		*3*
ԱՐԱՐԱՏԻ մարզ												
1	Արտաշատ	ք. Արտաշատ	16.09.2021.	**61**	*1*	*6*	*3*	*15*	*24*	*2*	*2*	*8*
2	Մասիս	ք. Մասիս	16.09.2021.	**91**	*1*	*12*	*15*	*7*	*24*	*5*		*27*
3	Վեդի	ք. Վեդի	17.09.2021.	**36**	*1*	*4*	*1*	*8*	*18*		*1*	*3*
4	Արարատ	ք. Արարատ	17.09.2021.	**31**	*1*	*4*		*4*	*14*	*2*		*6*

ԸՆԴԱՄԵՆԸ	**850**	***16***	***94***	***86***	***128***	***196***	***51***	***11***	***268***
	100%	***2%***	***11%***	***10%***	***15%***	***23%***	***6%***	***1%***	***32%***

Հանրային լսումներ Արմավիր քաղաքում, Արմավիրի մարզ, 14.09.2021.

Հանրային լսումներ Քարակերտում, Արմավիրի մարզ, 14.09.2021.

Հանրային լսումներ Մեծամորում, Արմավիրի մարզ, 14.09.2021.

Հանրային լսումներ Ջրարբիում, Արմավիրի մարզ, 15.09.2021.

Հանրային լսումներ Աղավնատանը, Արմավիրի մարզ, 15.09.2021.

Հանրային լսումներ Էջմիածնում, Արմավիրի մարզ, 15.09.2021.

Հանրային լսումներ Փարաքարում, Արմավիրի մարզ, 16.09.2021.

Հանրային լսումներ Արտաշատում, Արարատի մարզ, 16.09.2021.

Հանրային լսումներ Մասիսում, Արարատի մարզ, 16.09.2021.

Հանրային լսումներ Վեդիում, Արարատի մարզ, 17.09.2021.

Հանրային լսումներ Արարատ քաղաքում, Արարատի մարզ, 17.09.2021.

1.2 ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արմավիրի և Արարատի մարզերում հանրային լսումների ընթացքում առանձին համայնքներում բնակիչները արտահայտեցին իրենց մտահոգություններ և կարծիքները համայնքների խոշորացման գործընթացի վերաբերյալ, որոնք վերաբերում էին խոշորացման գործընթացի թե՛ բովանդակությանը և ընթացակարգին, թե՛ տեխնիկական և թե՛ բարոյահոգեբանական կողմերին: Ընդ որում, բնակիչներին հուզող հարցերի մի մասը նույնական էր անկախ համայնքից, իսկ մի մասը առանձնահատուկ էր և վերաբերում էր կոնկրետ համայնքներին և առանձին բնակավայրերին:

Ստորև ներկայացված է հանրային լսումների արդյունքներն ըստ միավորված համայնքների:

↓

↓

↓

1.2.1 Արմավիրի մարզ

1.2.1.1 ԱՐՄԱՎԻՐ համայնք

Միավորվող համայնքների թիվը	11
Լսումների անցկացման օրը	14.09.2021.
Լսումների անցկացման վայրը	ք. Արմավիր
Մասնակիցների թիվը	136

Արմավիր քաղաքում կայացած հանրային լսման մասնակիցները խոշորացման գործընթացի վերաբերյալ հայտնեցին թե՛ բացասական և թե՛ դրական կարծիքներ: Մասնակիցներից մի քանիսը, ովքեր հիմնականում բնակչության թվով ավելի փոքր համայնքներից էին, նշում էին, որ խոշորացման գործընթացը հանգեցնում է բնակավայրերի համափաչ զարգացման և լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում փոքր համայնքների բնակիչների համար: Սակայն հարցադրումների գերակշռող մեծամասնությունը մտահոգություններ էին խոշորացման գործընթացի առանձին կողմերի վերաբերյալ:

(1) Ի՞նչ սկզբունքով է իրականացվել համայնքների միավորումը: Արմավիր համայնքի բնակիչներին հետաքրքրող հարցերից մեկը վերաբերում էր համայնքների միավորման գործընթացի սկզբունքին: Մասնավորապես բնակիչներին հետաքրքրում էր, թե՝

1. Ինչու՞ է որոշում կայացվել Արմավիրի մարզում խոշորացման գործընթացն իրականացնել փնջային և ոչ թե՝ նախկին շրջանային միավորումների եղանակով,
2. Ինչու՞ է մարզերից մեկում (օրինակ՝ Արմավիրում) համայնքների խոշորացման գործընթացում կիրառվում փնջային մոտեցումը, իսկ մյուսում (օրինակ՝ Արարատում)՝ կիրառվում նախկին շրջանային միավորումների եղանակը,
3. Ո՞րն է համայնքների միավորման հիմքում ընկած հիմնական սկզբունքը՝
   - արդյո՞ք առկա է համայնքների միավորման ճանապարհային քարտեզ,
   - արդյո՞ք միավորման հիմքում համայնքների տեղադրությունն է, բնակչության թիվը, համայնքներում ենթակառուցվածքների առկայությունը կամ բացակայությունը, համայնքների սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, թե՞ որևէ այլ բան
   - կա՞ արդյոք միավորվող համայնքում բնակավայրերի օպտիմալ թիվ արդյունավետ կառավարման տեսանկյունից:

(2) Ինչպե՞ս է որոշվել միավորված համայնքի անունը: Միավորված համայնքի անունն ընտրելիս (Արմավիր) ի՞նչ սկզբունք է կիրառվել: Մարզի անունը Արմավիր է, մարզկենտրոնի անունը Արմավիր է, միգուցե կարելի էր **միավորված համայնքի անունը դնել Սարդարապատ**՝ որպես երկրի անկախության համար հերոսական պայքարի խորհրդանիշ:

(3) Ի՞նչ լիազորություններ են ունենալու միավորված համայնքի ՏԻՄ մարմինը և համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերը: Հանրային լսումների ընթացքում բնակիչները հաճախ բարձրացնում էին այնպիսի հարցեր, որոնք վկայում էին խոշորացման գործընթացի վերաբերյալ **իրազեկվածության պակասի** մասին: Մասնավորապես մասնակիցների մի մասը տեղյակ չէր, թե տեղական ինքնակառավարման ինչ լիազորություններ է ունենալու միավորված համայնքը և առանձին բնակավայրերը: Մասնավորապես, բնակիչներին հետաքրքրում էր, թե՝

1. արդյո՞ք համայնքների միավորման գործընթացը ռիսկեր չի պարունակում բնակավայրերի համար,
2. արդյո՞ք ՏԻՄ-երի լիազորությունները այս դեպքում չեն կրճատվում,

3. անկախությունից հետո Հայաստանը ընտրեց լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականությունը, ո՞րն է պատճառը, որ վերջին տարիներին նախընտրությունը կրկին տրվեց միավորման տարբերակին:

(4) Ի՞նչ հաստիքներ են կրճատվելու համայնքապետարաններում: Քննարկման սկզբում բանախոսը, ներկայացնելով համայնքների խոշորացման գործընթացը, առանձնահատուկ ուշադրություն դարձրեց այն հանգամանքին, որ խոշորացումն ավելի շատ վերաբերում է համայնքներում իշխանության լիազորությունների վերաբաշխման և նոր աշխատակազմի ձևավորմանը, որի արդյունքում որոշ հաստիքներ կարող են կրճատվել: Միևնույն ժամանակ՝ որոշ հաստիքներ կարող են ավելանալ, որոնք անհրաժեշտ են համայնքի կազմում ներառված բնակավայրերին և իրական ծառայություն են մատուցում բնակիչներին, ինչպես օրինակ՝ սոցիալական աշխատողներ, անասնաբույժ, մանկապարտեզի դաստիարակ և այլն: Այնուամենայնիվ բնակիչներին, հատկապես՝ համայնքապետարանների աշխատակիցներին, մտահոգում էր աշխատատեղերի կրճատման հարցը: Ի՞նչ սկզբունքով է լինելու կրճատումը, ո՞ր հաստիքներն են կրճատվելու և այլն:

(5) Ինչու՞ է Մյասնիկյան համայնքն արհեստականորեն ներառվել Արմավիր միավորված համայնքի կազմի մեջ: Արմավիր և Քարակերտ համայնքներում կայացած լսումների ընթացքում բնակիչները մտահոգություն հայտնեցին Մյասնիկյան համայնքը Արմավիր միավորված համայնքի կազմում ներառելու վերաբերյալ: Բնակիչներին, մասնավորապես, հետաքրքրում էր այն հարցը, թե ինչու՞ և ի՞նչ սկզբունքով է Մյասնիկյան համայնքը ներառվում Արմավիր և ոչ թե Բաղրամյան համայնքի կազմում: Բնակիչների կարծիքով՝ այս որոշումը զուրկ է տրամաբանությունից, քանի որ՝

1. Մյասնիկյանը դեռևս խորհրդային ժամանակաշրջանից մտել է Բաղրամյանի շրջանի մեջ և սոցիալ-մշակութային իմաստով ավելի շատ ինտեգրված է Բաղրամյանի տարածաշրջանի համայնքների հետ:
2. Մյասնիկյանը աշխարհագրական դիրքով ավելի մոտ է Բաղրամյան համայնքի բնակավայրերին, քան Արմավիր համայնքի բնակավայրերին: Մյասնիկյանը Արմավիր քաղաքից գտնվում է 12 կմ, իսկ Բաղրամյան գյուղից՝ 2 կմ հեռավորության վրա:
3. Բաղրամյանի տարածաշրջանի մի շարք հենակետային կառույցներ և ենթակառուցվածքներ տեղակայված են Մյասնիկյան համայնքում և սպասարկում են Բաղրամյանի տարածաշրջանի համայնքներին: Այդ կառույցներն են՝ ԱԻՆ, ԱԱԾ, «Հիսուսի մանուկներ» առողջապահական կենտրոն (ԱԿ), բանկեր և վարկային կազմակերպություններ, «Հայաստանի էլեկտրական ցանցերի» Բաղրամյանի մասնաճյուղը, «Գազպրոմ Արմենիայի» Բաղրամյանի մասնաճյուղը:
4. Բաղրամյան միավորվող համայնքի կազմում ընդգրկվող համայնքների ամբուլատորիաները սերտորեն փոխկապված են Մյասնիկյանում տեղակայված «Հիսուսի մանուկներ» ԱԿ-ի հետ: Ամբուլատորիաները մեթոդական ցուցումներ են ստանում և բոլոր կազմակերպչական խնդիրները լուծում են այդ կենտրոնի հետ: Միևնույն ժամանակ «Հիսուսի մանուկներ» ԱԿ-ի ցանցում գործող շտապ օգնության կայանը սպասարկում է Բաղրամյանի ողջ տարածաշրջանին:
5. Մյասնիկյան համայնքի հետ միասին Բաղրամյան միավորվող համայնքի բնակչության թիվը կկազմի մոտ 20,000: Մինչդեռ միայն Արմավիր քաղաքի բնակչությունը 37,000 է:

Մյասնիկյանի բնակիչները պնդում էին, որ իրենց գյուղը արհեստականորեն են ներառել Արմավիր միավորված համայնքի կազմում, թերևս **այն պատճառով, որ այն Բաղրամյանի նախկին շրջանի գյուղերից ամենամեծ բյուջեն ունի**: Հանրային լսումներին ներկա Մյասնիկյանի բնակիչներն այս որոշումը համարում են հիմնազուրկ, հիմնված միայն ինչ-որ մեկի կամայական և շահադիտական որոշման վրա:

(6) Ի՞նչ կարգավիճակ են ունենալու առողջապահական և կրթական հաստատությունները: Առողջապահական հաստատությունների ներկայացուցիչներին հետաքրքրում էր առանձին

համայնքներում տեղակայված ամբուլատորիաների հետագա կարգավիճակը. արդյո՞ք դրանք դառնալու են միավորված համայնքի կենտրոնում գործող բժշկական կենտրոնին ենթակա կառույցներ, թե՞ համայնքապատկան կառույց են լինելու: Առողջապահական հաստատությունների ներկայացուցիչները նաև լավատես էին, որ առողջապահական հաստատությունների կենտրոնացված կառավարման դեպքում, համայնքները կունենան որակյալ մասնագետներ և ծառայությունների որակը կբարձրանա:

Բնակիչներին նաև մտահոգում էր կրթական հաստատությունների՝ դպրոցների և մանկապարտեզների կարգավիճակը խոշորացումից հետո. արդյո՞ք միավորման արդյունքում երեխաները ստիպված չեն լինելու հաճախել այլ համայնքի դպրոց:

(7) Արդյո՞ք միջազգային և պետական կառույցները շարունակելու են ներդրումներ անել նոր ձևավորվող միավորված համայնքների զարգացման գործում: Միջազգային դոնոր կազմակերպությունները ՀՏՋՀ-ի միջոցով բավականին մեծ ներդրումներ են արել արդեն իսկ միավորված համայնքներում՝ տրամադրելով գյուղատնտեսական տեխնիկա, ստեղծելով ենթակառուցվածքներ, բարեկարգելով առկա համայնքապատկան կառույցները: Սակայն բնակիչներին մտահոգում էր այն հարցը, թե արդյո՞ք պետությունը բավարար չափով ֆինանսավորում ունի նախատեսած խոշորացված համայնքների աջակցության համար, հաշվի առնելով, եթե միջազգային կառույցները բավարար չափով չաջակցեն համայնքներին:

(8) Ո՞րն է խոշորացված համայնքի կազմում համեմատաբար զարգացած համայնքների միավորման իմաստը: Որոշ համեմատաբար զարգացած համայնքների ղեկավարներ և ավագանու անդամներ իրենց դիրքորոշումը ներկայացրեցին խոշորացման գործընթացի վերաբերյալ, նշելով որ միավորումը իմաստազուրկ է այն համայնքների համար, որոնք առանց աջակցության և սեփական մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական միջոցներով կարողանում են բարեկարգել համայնքը: Մասնավորապես Սարդարապատ համայնքի ղեկավարը նշեց, որ մինչ այժմ վերջին տարիների ընթացքում, համայնքը կարողացել է սեփական միջոցներով և տարբեր ծրարերի միջոցով բարեկարգել համայնքի ճանապարհները, վերանորոգել է ամբուլատորիան, մշակույթի տունը, համայնքն ամբողջովին լուսավորված և գազաֆիկացված է, և բոլոր սոցիալական հարցերին ամենօրյա աջակցություն է ցուցաբերում համայնքը, մասնավորապես՝ յուրաքանչյուր նորածին երեխայի ընտանիքին հատկացնելով 80,000 դրամ, իսկ զինվորական ծառայությունը ավարտելուց հետո բնակչին հատկացնելով 50,000 դրամ: Համայնքի ղեկավարին, մասնավորապես, հետաքրքրում էր հարցեր, թե՝

1. որքանո՞վ է նպատակահարմար խոշորացումը, եթե համայնքը կարողանում է առանձին լինելով՝ հոգալ կարիքները և լրացուցիչ ծառայություններ մատուցել բնակչությանը և
2. արդյո՞ք համայնքների խոշորացումից հետո միավորված համայնքը կարողանալու է շարունակել վերոհիշյալ սոցիալական ծրագրերը (համոզմունք ունեին, որ՝ ոչ):

1.2.1.2 ԲԱՂՐԱՄՅԱՆ համայնք

Միավորվող համայնքների թիվը	14
Լսումների անցկացման օրը	14.09.2021.
Լսումների անցկացման վայրը	գ. Քարակերտ
Մասնակիցների թիվը	71

(1) Ինչու՞ է Մյասնիկյան համայնքն արհեստականորեն ներառվել Արմավիր միավորված համայնքի կազմի մեջ: Ինչպես և Արմավիր քաղաքում կայացած քննարկման ընթացքում, այնպես էլ Քարակերտում բնակիչներին մտահոգող հիմնական հարցը վերաբերում էր Մյասնիկյան համայնքի կարգավիճակին: Հօգուտ Բաղրամյան համայնքին Մյասնիկյան միավորմանը, բնակիչները հիմնականում ներկայացրեցին նույն փաստարկները, ինչը որ Արմավիրում կայացած քննարկման մասնակիցները: Մյասնիկյան համայնքի «Հիսուսի մանուկներ» ԱԿ տնօրենը, մասնավորապես, նշեց, որ կենտրոնը սպասարկում է Բաղրամյանի տարածաշրջանի բոլոր գյուղերին և թե՛ իրավական, թե՛ տնտեսական իմաստով նպատակահարմար չէ Մյասնիկյանի միացումը Արմավիր համայնքին: Հետևաբար՝ հարց է առաջանում՝ արդյո՞ք Մյասնիկյանը գյուղը Արմավիր միավորված համայնքի կազմում միավորման որոշման ընդունումից առաջ որևէ փորձագիտական գնահատում եղել է:

(2) Ինչո՞ւ հաշվի չեն առել բնակիչների կարծիքը խոշորացման վերաբերյալ և հանրաքվե չի անցկացվում: Գրեթե բոլոր համայնքներում կայացած հանրային լսումների ընթացքում բնակիչներին մտահոգում էր այն հարցը, թե ինչու համայնքների խոշորացման գործընթացի վերաբերյալ բնակիչների կարծիքը հաշվի չի առնվում և հանրաքվե չի իրականացվում : Միևնույն ժամանակ, բնակիչները մոտ հարց առաջացավ հանրային լսումների նպատակահարմարության վերաբերյալ, եթե կառավարությունն արդեն որոշում է կայացրել: Ի պատասխան, բանախոսը ներկայացրեց, որ ըստ սահմանադրության 190 հոդվածի՝ *Ազգային ժողովը խոշորացման վերաբերյալ համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը*: Միևնույն ժամանակ համայնքների կարծիքը խորհրդատվական և ոչ թե պարտադիր բնույթ է կրում: Բանախոսը նաև նշեց, որ այստեղ գործում է գերակա հանրային շահի գաղափարը: Այսինքն, եթե համայնքը, որպես հանրային կառավարման ինստիտուտ չի կարողանում պատշաճ ծառայություն մատուցել բնակիչներին, ապա անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումներ, տվյալ դեպքում համայնքների խոշորացման ճանապարհով: Չնայած այս մեկնաբանությանը, թե՛ Բաղրամյան միավորվող համայնքի և թե՛ մյուս համայնքների բնակիչների զգալի մասը գտնում էին, որ իրենց իրավունքները ոտնահարված են, քանի որ իրենց կարծիքը հաշվի չեն առել:

(3) Որքանո՞վ է հավանական, որ բնակչության թվով փոքր բնակավայրերը ներկայացված կլինեն միավորված համայնքի ավագանու կազմում: Խոշորացման գործընթացի վերաբերյալ համայնքի բնակիչներին մտահոգում էր նաև բնակչության թվաքանակով փոքր համայնքներից ավագանու կազմում ներկայացված լինելու հավանականությունը: Բնակիչների կարծիքով՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում, բնակչության մեծ թվով համայնքներում ավագանին ավելի շատ ներկայություն կունենա, իսկ փոքր համայնքներում էլ ոչ մի ծրագիր չի իրականացվի: Միևնույն ժամանակ, ավագանին կողմ կլինի միջոցներն ուղղել իր «մեծ» բնակավայրի զարգացմանը, ոչ թե փոքրերի: Բանախոսները վստահեցրեցին, որ համայնքների խոշորացման Հայաստանյան փորձը իրականում վկայում է հակառակի մասին, որ միավորված համայնքների ավագանին և համայնքի ղեկավարները առաջին հերթին ուշադրություն են դարձնում փոքր և տնտեսապես ավելի թույլ բնակավայրերին: Ընտրված տեղական իշխանությունը համամասնական ընտրակարգի դեպքում արդեն քաղաքական պատասխանատվություն է կրում իր որոշումների համար և առավել հետևողական է առաջնահերթությունների սահմանման հարցում: Փոքր բնակավայրերի ներկայացվածության երաշխիք է

հանդիսանում այն հանգամանքը, որ բոլոր բնակավայրերի վարչական ղեկավարները կարող են ներկա լինել ավագանու նիստերին և ներկայացնել իր բնակավայրի խնդիրները:

(4) Ի՞նչ է իրենից ներկայացնում համամասնական ընտրակարգը ՏԻՄ-երի դեպքում և ինչպե՞ս է իրականացվելու գործող ավագանիների, համայնքների ղեկավարների լիազորությունների դադարեցումը: Քննարկմանը մասնակցած համայնքապետարանների աշխատակիցներին, համայնքի ղեկավարներին և ավագանու անդամներին հետաքրքրում էին հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում համամասնական ընտրակարգը ՏԻՄ ընտրությունների պարագայում: Արդյո՞ք իրականացվում է նույն սկզբունքով, ինչպես և Ազգային Ժողովի ընտրությունները, թե՞ այլ կերպ:
2. Եթե համայնքի ղեկավարի կամ ավագանու լիազորությունները դեռևս չեն դադարել և/կամ նրանք դեռ նոր են սկսել պաշտոնավարել, ինչպե՞ս է որոշվելու լիազորությունների դադարեցման հարցը: Արդյո՞ք լիազորությունները դադարեցվում են խոշորացման վերաբերյալ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո, թե՞ դեկտեմբերի 5-ին նոր ՏԻՄ ընտրություններից հետո:
3. Արդյո՞ք կուսակցական ցուցակներով ընտրությունները չեն տանում իրավիճակի լարվածության և բնակիչների պառակտման: Կան կարծիքներ, որ դա բերելու է առանց այն էլ պառակտված հասարակության էլ ավելի քաղաքականացման և ավելի խորը պառակտման:
4. Արդյո՞ք պարտադի՞ր է, որ ավագանու անդամը կուսակցական լինի: Անգամ եթե ոչ, ինչո՞ւ են պարտադրում, որ մարդը որևէ կուսակցության ցանկով հանդես գա: Որքա՞ն է հավանականությունը, որ անկուսակցականները կարող են դառնալ ավագանու անդամ:

(5) Որքանո՞վ հասանելի կլինեն համայնքային ծառայությունները բնակչության համար: Բնակիչների մի մասին մտահոգում էր այն հարցը՝ արդյո՞ք մեկ տեղեկանք ստանալու համար ստիպված են իրենց բնակավայրից հասնել համայնքի կենտրոն, թե՞ կարող են տեղում ստանալ այդ ծառայությունը: Բանախոսը նշեց, որ այդ ծառայությունները շարունակելու է տեղում բնակավայրի վարչական կենտրոնից ստանալ և համայնքապետարան գնալու կարիք չկա:

(6) Ի՞նչ է ցույց տալիս համայնքների խոշորացման նախկին փորձը: Քննարկման մասնակիցները նշեցին, որ իրենցից ոչ հեռու Արագածավան խոշորացված համայնքն է, որը վառ օրինակ է, որ խոշորացումից հետո այնտեղ ոչինչ չի փոխվել մարդկանց կենսակերպում: Այսինքն, համայնքը և առանձին բնակավայրերը որևէ կերպ չեն զարգացել: Հետևաբար՝ հարց է առաջանում խոշորացման գործընթացի նպատակահարմարության վերաբերյալ: Ի պատասխան, բանախոսները ներկայացրեցին նաև խոշորացման գործընթացի դրական օրինակներ, և նշեցին, որ կան խոշորացման և դրական և բացասական օրինակներ: Ընդ որում՝ դրական փոփոխությունները հիմնականում պայմանավորված են արդյունավետ կառավարմամբ:

1.2.1.3 ՄԵԾԱՄՈՐ համայնք

Միավորվող համայնքների թիվը	31
Լսումների անցկացման օրը	14.09.2021.
Լսումների անցկացման վայրը	ք. Մեծամոր
Մասնակիցների թիվը	155

Ինչպես և Բաղրամյան համայնքում կայացած քննարկման ընթացքում բնակիչներին մտահոգում էր այն հարցը, թե ինչու՞ համայնքների խոշորացման գործընթացի վերաբերյալ բնակիչների կարծիքը հաշվի չի առնվում: Եթե համայնքների խոշորացումը քաղաքական որոշում է և արդեն իսկ կայացված է կառավարության կողմից, ապա ո՞րն է իմաստը նմանատիպ հանդիպումների կազմակերպման: Միևնույն ժամանակ բնակիչները հիշեցրեցին, որ ՀՀ վարչապետը իրենց հետ հանդիպման ընթացքում խոստացել է՝ եթե բնակչությունը չի ցանկանում համայնքների միավորում, ապա դա չի լինի: Հետևաբար՝ նրանց մոտ հարց է առաջանում՝ ինչու՞ իրենց կարծիքը հաշվի չեն առնում:

(1) Ի՞նչ է իրենից ներկայացնում համամասնական ընտրակարգը: Մեծամոր համայնքի բնակիչներին մտահոգող հարցերի թվում էր համայնքների խոշորացումից հետո ավագանու ընտրությունների անցկացման և համայնքի ղեկավարի ընտրության կարգը: Մասնավորապես բնակիչներին հետաքրքրում էին հետևյալ հարցերը.

1. որքա՞ն է լինելու ավագանու անդամների թիվը Մեծամոր համայնքում,
2. եթե համայնքի կազմում ներառվելու են 31 բնակավայրեր, ապա որքանո՞վ է հավանական, որ բոլոր համայնքներից ավագանու կազմում ներկայացուցիչներ կլինեն:

Բանախոսը պարզաբանելով նոր ընտրակարգը նշեց, որ Մեծամոր համայնքն ունենալու է 27 ավագանու անդամ, հետևաբար պարզ է, որ առնվազն 4 համայնք ավագանու կազմում ներկայացված չեն լինի: Սակայն դա չի նշանակում, որ այդ համայնքների խնդիրները անտեսվելու են: Արդեն իսկ խոշորացված համայնքների փորձը վկայում է հակառակի մասին:

(2) Ի՞նչ է լինելու գործող ավագանիների, համայնքի ղեկավարների հետ: Համայնքապետարանի աշխատակիցներին, ավագանիներին և համայնքի ղեկավարներին մտահոգում էր այն հարցը, թե արդյո՞ք նրանք շարունակելու են պաշտոնավարել ԱԺ-ում օրենքը ընդունվելուց հետո և եթե այո, ապա որքա՞ն ժամանակ: Բանախոսը բնակիչներին ներկայացրեց, ներկայումս գործող օրենսդրության համաձայն, ինչպես և ինչ ժամկետներում է տեղի ունենալու համայնքի ղեկավարների լիազորությունների դադարեցումը, համայնքապետարանների աշխատակիցների աշխատատեղերի կրճատումը, աշխատանքի ընդունման մրցութային կարգը և ժամկետները:

(3) Ինչպիսի՞ն են լինելու ավագանու լիազորությունները: Բնակիչներին հետաքրքրում էր նաև, թե արդյո՞ք ավագանու լիազորությունները նույն են լինելու՝ ինչպես նախկինում, ինչպես նաև՝ ի՞նչ դերակատարում են ունենալու նրանք համայնքի համար կարևոր որոշումների կայացման ընթացքում: Հարցին պատասխանելով՝ բանախոսը նշեց, որ ավագանու լիազորությունները ըստ համամասնական ընտրակարգի տրամաբանության և ՏԻՄ օրենքի ավելին են լինելու, քան նախկինում:

(4) Ի՞նչ սկզբունքով է իրականացվել համայնքների միավորումը: Մեծամոր համայնքի բնակիչներին հետաքրքրում էր, թե՝

1. ի՞նչ սկզբունքով է ընտրվել 31 համայնքներից բաղկացած Մեծամոր համայնքի փունջը,
2. արդյո՞ք միավորման հիմքում համայնքների տեղադրությո՞ւնն է, թե՞ բնակչության թիվը,

3. հաշվի առնելով, որ Արմավիրի մարզը տարածքով փոքր է, սակայն բնակչության թվով ամենախիտ բնակեցվածը՝ որքանո՞վ է նպատակահարմար այսքան բնակավայր միավորել:

(5) Ինչու՞ է Մայիսյան համայնքը ներառվել Արմավիր միավորված համայնքի և ոչ թե Մեծամորի կազմում: Մեծամոր միավորվող համայնքի կազմում ներառվող Մայիսյան համայնքի բնակիչների մոտ հարց առաջացավ, թե ի՞նչ տրամաբանությամբ է Մայիսյանը ընդգրկվել Արմավիրի և ոչ թե Մեծամոր համայնքի կազմում: Մայիսյանը մոտ է Մեծամորին և համայնքի ներկայիս վարչական տարածքում է գտնվում Հայկական ատոմային էլեկտրակայանը (ՀԱԷԿ): Մեծամորի և Մայիսյանի բնակիչների մի մասը հանդիսանում են ՀԱԷԿ-ի աշխատակիցներ, հետևաբար ավելի տրամաբանական կլիներ Մայիսյանը կցել Մեծամորին:

(6) Ո՞րն է երաշխիքը, որ համայնքում առկա սոցիալական խնդիրները լուծում կստանան համայնքների միավորումից հետո: Բնակիչներին մտահոգում էին մի շարք խնդիրներ, որոնք անմիջական առնչություն չունեին միավորման գործընթացի հետ, սակայն նրանք ցանկանում էին տեղեկանալ, թե որքանո՞վ է հավանական, որ իրենց խնդիրները կլուծվեն խոշորացումից հետո: Այդպիսի խնդիրների թվում էին, օրինակ, Մեծամոր քաղաքում առկա անմխիթար վիճակում գտնվող տնակները և այնտեղից բնակիչների շուտափույթ տեղափոխման հարցը:

(7) Որքանո՞վ է հավանական, որ բնակչության թվով փոքր բնակավայրերը ներկայացված կլինեն միավորված համայնքի ավագանու կազմում: Մեծամոր համայնքի բնակիչներին մտահոգում էր նաև փոքր համայնքներից ավագանու ներկայացված լինելու հավանականությունը: Ըստ բնակիչների՝ այսքան շատ համայնքների պարագայում փոքր համայնքներին ավելի քիչ ուշադրություն կդարձվի խոշորացումից հետո՝ հաշվի առնելով, որ փոքր համայնքից ավագանի ունենալը իրատեսական չէ:

(8) Եթե առկա են միջազգային դոնորների ռեսուրսներ և պետական աջակցության հեռանկար համայնքներին, ապա ինչո՞ւ դրանք չեն տրամադրվել նախքան խոշորացումը: Համայնքի ղեկավարներին հետաքրքրում էր այն հարցը, թե ինչու՞ է պարտադիր իրականացնել համայնքների միավորում, հետո նոր ռեսուրսներ հատկացնել համայնքներին: Չէ որ այդ ռեսուրսները հիմա էլ առկա են և հասանելի: Բանախոսը նշեց, որ համայնքների միավորման իմաստը ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետ կառավարումն է և միայն խոշորացման այդ դեպքում է պետությունը և միջազգային դոնորները պատրաստ հատկացնել անհրաժեշտ ռեսուրսները:

(9) Ինչո՞ւ Արմավիրի մարզում, պիլոտային խոշորացում չի իրականացվել: Քննարկման ընթացքում հնչած հարցերից մեկը վերաբերում էր մարզում պիլոտային խոշորացման անհրաժեշտությանը, հաշվի առնելով, որ Արմավիրի մարզն իր խտությամբ տարբերվում է Թումանյան կամ Տաթև միավորված համայնքներից: Բանախոսը նշեց, որ այս գործընթացը չի կարող տարիներ տևել, քանի որ համայնքների խոշորացման գործընթացին պետք է հաջորդեն շատ ավելի կարևոր բարեփոխումներ, որոնց իմաստը պետական կառավարման որոշ լիազորությունների փոխանցումն է համայնքներին:

1.2.1.4 ԱՐԱՔՍ համայնք

Միավորվող համայնքների թիվը	13
Լսումների անցկացման օրը	15.09.2021.
Լսումների անցկացման վայրը	գ. Զրարբի
Մասնակիցների թիվը	38

(1) Որքանո՞վ է նպատակահարմար միավորել Էջմիածնի և Արմավիրի հարակից համայնքները, հաշվի առնելով այն փաստը, որ այդ համայնքները արդեն իսկ խիտ բնակեցված են: Քննարկման մասնակիցներին հետաքրքրում էր, թե կա՞ արդյոք անհրաժեշտություն խիտ բնակեցված համայնքների միավորման: Ըստ համայնքապետարանների աշխատակիցների այդ դեպքում կառավարման խնդիրներ կարող են առաջանալ: Միևնույն ժամանակ Էջմիածնի տարածաշրջանի համայնքները հիմնականում ինքնաբավ են և ինքնուրույն կարողանում են լուծել իրենց խնդիրները:

(2) Ո՞րն է իմաստը համայնքների միավորման, եթե առանձին համայնքներն արդեն իսկ կարողանում են բնակչությանը պատշաճ ծառայություններ մատուցել: Ըստ համայնքների ղեկավարների՝ բնակիչներն իրենց համայնքներում շատ պահանջատեր են և բոլոր ծառայությունները, ներառյալ աղբահանությունը, ճանապարհների բարեկարգումը և այլ ծառայություններ իրականացվում են պատշաճ մակարդակով: Բոլոր համայնքներում կան մանկապարտեզներ: Հետևաբար՝ հարց է առաջանում՝ ի՞նչ լրացուցիչ ծառայություններ է հնարավոր ապահովել խոշորացումից հետո, որ ներկայումս չի իրականացվում:

(3) Ինչո՞ւ նախքան խոշորացումը համայնքապետարանների աշխատակիցների վերապատրաստումներ չեն իրականացվում: Հանդիպման ընթացքում բանախոսը ներկայացնելով համայնքների միավորման առավելությունները՝ նշեց նաև, որ նպատակներից մեկը մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումն է, որը ենթադրում է նախկին ոչ անհրաժեշտ հաստիքների կրճատում, նոր՝ համայնքների համար կարևոր և ծառայություն մատուցող հաստիքների ավելացում, ինչպես նաև որոշ մասնագետների վերապրոֆիլավորում և վերապատրաստում: Այդ վերապատրաստումները թույլ կտան, որ օրինակ՝ համայնքապետարանի աշխատակիցները կարողանան ծրագրեր ներկայացնեն դոնոր կազմակերպություններին և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ ներգրավեն, ինչպես նաև թույլ կտան բարձրացնել հաշվապահների որակավորումը, որոնց մեծ մասը հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներին չեն տիրապետում: Այս համատեքստում համայնքապետարանների աշխատակիցների մոտ հարց առաջացավ, թե ինչու՞ այդ վերապատրաստումները նախքան խոշորացումը չեն իրականացվում՝ եթե դրա անհրաժեշտությունը կա:

(4) Ինչո՞ւ պետությունը չի ավելացնում փոքր համայնքների դոտացիան, այլ գնում է համայնքների միավորման և բյուջետային միջոցների վերաբաշխման ճանապարհով: Բնակիչներին հետաքրքրում էր նաև բյուջետային միջոցների վերաբաշխման սկզբունքը և իմաստը: Ըստ համայնքապետարանի աշխատակիցների, եթե խոշորացման իմաստը բյուջետային միջոցների արդյունավետ տնօրինումն է և վերաբաշխումը, ապա Արաքս միավորվող համայնքի բնակավայրերից ոչ մեկը չունի այնքան հնարավորություն, որ իր միջոցների մի մասը հետագայում հատկացնի մյուս համայնքներին: Բանախոսը պարզաբանեց, որ խոշորացման դրական կողմերից մեկը հենց ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարումն է և սեփական եկամուտների ավելացումը և այդ մասին են վկայում Հայաստանում արդեն իսկ խոշորացված համայնքների փորձը:

(5) Ինչի՞ հաշվին են ավելացել սեփական եկամուտները միավորված համայնքներում: Համայնքի ղեկավարներին հատկապես հետաքրքրում էր, թե ինչի՞ շնորհիվ են ավելացել համայնքի սեփական

եկամուտները խոշորացումից հետո: Բանախոսը նշեց սեփական եկամուտների ավելացման մի քանի գործոն.

1. առկա ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում,
2. առավել արդյունավետ հարկահավաքություն,
3. փոքր համայնքում առկա ենթակառուցվածքների, կառույցների և շինությունների արդյունավետ կառավարում, որը թույլ է տալիս ավելացնել եկամուտները վարձակալության կամ օտարումների հաշվին և այլն:

(6) Ինչպե՞ս է որոշում կայացվել, որ Ջրառատը պետք է լինի Արաքս միավորված համայնքի կենտրոնը: Բնակիչներին հետաքրքրում էր նաև, թե ինչո՞ւ է համայնքի կենտրոնը որոշվել Ջրառատը: Բնակիչների կարծիքով անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որը Ջրառատի աշխարհագրական դիրքը նպաստավոր չէ համայնքի կենտրոն լինելու համար: Օրինակ՝ Արտիմետ համայնքից Ջրառատ հեռավորությունը 14 կմ է: Քննարկման մասնակիցների մեծ մասն առավել հակված էին որպես համայնքի կենտրոն ընտրել Գայ համայնքը, որպես զարգացած համայնք, իսկ մի մասը հակված էր Ակնաշեն համայնքի ընտրությանը՝ աշխարհագրական դիրքի պատճառով:

(7) Ինչպիսի՞ն է նախկին միավորված համայնքների փորձը: Քննարկման մասնակիցները խնդրեցին ներկայացնել նաև արդեն իսկ խոշորացված համայնքների փորձը, հատկապես այն համայնքների, որոնք բնակչության թվով մեծ են և համեմատական են Էջմիածնի տարածաշրջանի համայնքների հետ: Բանախոսը ներկայացրեց խոշորացված համայնքների փորձը, նշելով, որ արդյունավետ կառավարման և ռեսուրսների ճիշտ վերաբաշխման դեպքում անկախ բնակչության թվից փորձը հաջողակ է:

1.2.1.5 ԽՈՅ համայնք

Միավորվող համայնքների թիվը	17
Լսումների անցկացման օրը	15.09.2021.
Լսումների անցկացման վայրը	գ. Աղավնատուն
Մասնակիցների թիվը	83

(1) Համայնքների միավորումից հետո արդյո՞ք ավագանու անդամները ստանալու են աշխատավարձ: Ավագանու անդամներին հետաքրքրում էր, թե արդյո՞ք նախատեսվում է աշխատավարձ համայնքի ավագանիների համար խոշորացումից հետո: Բանախոսը պարզաբանեց, որ ըստ գործող օրենսդրությամբ՝ ավագանու համար աշխատավարձ նախատեսված չէ: Սակայն համայնքը իր բյուջեյում պետք է նախատեսի ավագանու գործուղման և իրենց լիազորություններից բխող այլ ծառայությունների ծախսերի փոխհատուցում:

(2) Ո՞րն է խոշորացված համայնքի կազմում համեմատաբար զարգացած համայնքների միավորման իմաստը: Որոշ համեմատաբար զարգացած համայնքների ղեկավարներ և ավագանու անդամներ (Աղավնատուն, Արշալույս) իրենց դիրքորոշումը ներկայացրեցին խոշորացման գործընթացի վերաբերյալ, նշելով որ միավորումը իմաստազուրկ է այն համայնքների համար, որոնք առանց աջակցության, սեփական միջոցներով և բարերարների աջակցությամբ կարողացել զարգացնել համայնքը: Մասնավորապես՝ Աղավանատուն համայնքի բնակիչները թվարկեցին այն ձեռքբերումները, որոնք ունեցել է համայնքը մինչ այժմ. բարեկարգված փողոցներ, փողոցների լուսավորություն, պատշաճ գործող գազաֆիկացման և ջրամատակարարման համակարգ, վերանորոգված դպրոց, մանկապարտեզ և մշակույթի տուն, համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի առկայություն և այլն: Բանախոսը պատասխանելով հարցին նշեց, որ իրականում բոլոր համայնքներն համաչափ զարգանալու են: Շատ ավելի կարևոր է այն հանգամանքը, որ հաջորդ փուլում պետությունը իր լիազորությունների մի մասը փոխանցելու է միավորված և ուժեղ համայքներին, այդ թվում կրթություն, առողջապահություն, ճանապարհաշինարարություն և այլն:

(3) Արդյո՞ք խոշորացումից հետո զարգացած համայնքները ստիպված են իրենց նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսներն ուղղել քիչ զարգացած համայնքներին: Աղավնատուն համայնքի բնակիչներին հետաքրքրում էր նաև՝ որքանո՞վ է արդարացի իրենց համայնքի ֆինանսական ռեսուրսները, կամ օրինակ՝ գյուղտեխնիկան հատկացնել աղքատ համայնքներին, չէ՞ որ այդ միջոցները ստեղծվել են Աղավնատան բնակիչներին սպասարկելու համար: Բնակիչները մտահոգված էին, որ փաստորեն խոշորացված համայնքի տրամաբանության համաձայն սկզբում ուշադրություն կդարձնեն փոքր և քիչ զարգացած համայնքներին և իրենց համայնքում զարգացումը կանգ կառնի: Բանախոսը ներկայացրեց, որ խոշորացված համայնքների նախկին փորձը վկայում է այն մասին, որ գյուղատնտեսական տեխնիկան խոշորացված համայնքներում համայնքներում օգտագործվում է ըստ անհրաժեշտության: Մասնավորապես, Դիլիջան համայնքում գյուղատնտեսական տեխնիկայի պարկը տեղակայված է Հաղարծին բնակավայրում, սակայն սպասարկում է ամբողջ համայնքին:

(4) Ինչո՞ւ է Խոյ միավորված համայնքի կենտրոն ընտրվել Գեղակերտը, և ոչ թե Աղավնատունը, որն ավելի զարգացած է: Ընդհանուր առմամբ Աղավնատուն համայնքի բնակիչները դեմ էին խոշորացմանը, սակայն եթե պետք է միավորվեն, ապա նրանց մոտ հարց է առաջանում, թե ինչու՞ է որպես կենտրոն ընտրվել Գեղակերտը, որը չնայած բնակչության թվով փոքր չէ, բայց շատ ավելի քիչ զարգացած է, քան Աղավնատունը: Բանախոսը պարզաբանեց, որ, որպես կանոն, միավորված համայնքների կենտրոնները որոշվել են բնակչության թվի, աշխարհագրական դիրքի կամ այլ սկզբունքներով մարզպետարանների և համայնքի ղեկավարների հետ ունեցած խորհրդատվությունների և հանդիպումների արդյունքում:

(5) Հնարավո՞ր չէ արդյոք փոխել միավորված համայնքի համար արդեն որոշված Խոյ անվանումը: Քննարկման մասնակիցների մեծամասնությունը դեմ էր Խոյ անվանմանը և առաջարկում էր ընտրել մեկ այլ, առավել բարեհունչ անուն: Մարզպետարանի ներկայացուցիչը պարզաբանեց, որ Խոյ անվանումը ընտրվել է այն պատճառով, որ համայնքի կազմում ներգրավված 17 համայնքների բնակչությունը հիմնականում վերաբնակեցվել է Իրանի (Պարսկաստանի) Խոյ գավառից և այդ նպատակով է ընտրվել այդ անվանումը:

(6) Ի՞նչ է իրենից ներկայացնում համամասնական ընտրակարգը: Խոյ միավորվող համայնքի բնակիչներին մտահոգող հարցերի թվում էր նաև համայնքների խոշորացումից հետո ավագանու ընտրությունների անցկացման և համայնքի ղեկավարի ընտրության կարգը: Մասնավորապես բնակիչներին հետաքրքրում էին հետևյալ հարցերը.

1. որքա՞ն է լինելու ավագանու անդամների թիվը Խոյ համայնքում,
2. եթե համայնքի կազմում ներառվելու են 17 բնակավայրեր, ապա որքանո՞վ է հավանական, որ բոլոր համայնքներից ավագանու կազմում ներկայացուցիչներ կլինեն,
3. ինչո՞ւ են ընտրություններն իրականացվում կուսակցական սկզբունքով. բնակիչներին իրենց մտահոգությունը հայտնեցին, որ կուսակցական ընտրությունների դեպքում բնակիչների միջև պառակտում և լարվածություն կմտնի, հատկապես ներկայիս ներքաղաքական լարված վիճակի պայմաններում:

(7) Ինչո՞ւ համայնքի կենտրոնը վարչական ղեկավար չունի: Խոյ միավորվող համայնքի կենտրոն ընտրված Գեղակերտի համայնքապետարանի աշխատակիցներին հետաքրքրում է, թե ինչու՞ համայնքի կենտրոնը ևս չունի վարչական ղեկավար, որը կներկայացնի համայնքի շահերը, այն դեպքում՝ եթե ընտրությունների արդյունքում համայնքի ղեկավար ընտրվեց այլ համայնքի ներկայացուցիչ: Բանախոսը պարզաբանեց, որ համամասնական ընտրությունների և կուսակցական սկզբունքի ամբողջ իմաստն այն է, որ այսուհետ կուսակցությունն է պատասխանատվություն կրելու համայնքի համաչափ զարգացման համար, հետևապես նման խնդիր չի կարող առաջանալ:

1.2.1.6 ՎԱՂԱՐՇԱՊԱՏ համայնք

Միավորվող համայնքների թիվը	2
Լսումների անցկացման օրը	15.09.2021.
Լսումների անցկացման վայրը	ք. Էջմիածին
Մասնակիցների թիվը	104

(1) Որո՞նք են խոշորացման դրական կողմերը: Էջմիածին համայնքի ղեկավարը խնդրեց ներկայացնել, թե որո՞նք են խոշորացման դրական կողմերը և ինչ բարեփոխումներ են ենթադրում միավորված համայնքի համար:

(2) Արդյո՞ք նախատեսվում են օրենսդրական հնարավորություններ բյուջեի պլանավորման ժամկետների փոփոխության հետ կապված: Որպես կանոն՝ համայնքներում հաջորդ տարվա բյուջեի պլանավորումը սկսվում է հոկտեմբեր ամսից, համայնքի ղեկավարների ընտրությունները դեկտեմբերին են: Համայնքապետարանի աշխատակիցներին հետաքրքրում էր՝ արդյո՞ք հնարավոր է օրենսդրական որոշ կարգավորումներ իրականացնել, որպեսզի Էջմիածին միավորված համայնքը կարողանա արդեն իսկ հիմա պլանավորել բյուջեն ներառյալ Ոսկեհատ համայնքի բյուջեն: Ըստ համայնքապետի՝ տարեվերջին տեխնիկապես անհնար է բյուջեն պլանավորել, հատկապես մարզի այն համայնքներում, որտեղ բնակավայրերի թիվը շատ ավելին է: Բանախոսը նշեց, որ, իհարկե, բյուջեի պլանավորման խնդիր առաջանում է ժամկետների առումով: Ընտրություններից հետո անհրաժեշտ է կարճ ժամկետում ձևավորել աշխատակազմ և իրականացնել այդ աշխատանքները՝ թեկուզ հաջորդ տարվա փետրվար-մարտ ամիսներին:

(3) Ինչպե՞ս է կարգավորվել ավագանու լիազորությունների հարցը, եթե ժամկետը ՏԻՄ ընտրություններից շուտ է լրանում: Էջմիածին համայնքի ղեկավարի հաջորդ հարցը վերաբերում էր ավագանու լիազորություններին: Ինչպե՞ս պետք է վարվել, եթե Էջմիածին համայնքի ավագանու լիազորությունները լրանում են 2021թ.-ի նոյեմբերի 1-ին: Բանախոսը նշեց, որ ներկայումս կա նախագիծ, ըստ որի կարող է նախատեսվել, որ ավագանու լիազորությունների ժամկետը երկարաձգվի մինչև ընտրություններ, սակայն այդ նախագիծը դեռևս քննարկման փուլում է: Անհնար է այնպես պլանավորել, որ բոլոր ժամկետները պահպանվեին և միևնույն ժամանակ իրականացվեր համայնքների միավորման գործընթացը:

(4) Ինչպե՞ս է իրականացվելու աշխատակազմերի կրճատման գործընթացը: Համայնքապետարանի աշխատակիցներն ունեին տեխնիկական բնույթի հարցեր աշխատատեղերի կրճատման հետ կապված: Մասնավորապես՝

1. Համայնքապետարանում կան նաև ֆիզարձակուրդում գտնվող աշխատակիցներ: Արդյո՞ք նրանց աշխատատեղերը նույնպես կրճատվելու են՝ մյուս աշխատակիցների հետ միասին: Այդ դեպքում օրենսդրական հակասություն է առաջանում, եթե ֆիզարձակուրդում գտնվողի հաստիքը կրճատվում է, ապա ըստ աշխատանքային օրենսգրքի դա չի կարելի իրականացնել:
2. Աշխատատեղերի և հաստիքների կրճատումը, մրցույթի անցկացումը և նոր հաստիքների համալրումը լրացուցիչ ծախսային բեռ է համայնքի բյուջեի վրա, որը կազմելու է 20 միլիոն ՀՀ դրամից ավելի: Արդյո՞ք հնարավոր չէ Էջմիածին համայնքի դեպքում, բացառություն անել և գործող աշխատակազմը չկրճատել, քանի որ միայն Ոսկեհատ համայնքն է միանում Էջմիածնին: Համայնքապետարանի աշխատակիցներն առաջարկեցին պարզապես համայնքապետարանը համալրել Ոսկեհատ համայնքի աշխատողներով և խուսափել լրացուցիչ ծախսերից: Բանախոսը նշեց, որ աշխատակիցների ընտրության մրցութային կարգը պարտադիր է համայնքների խոշորացման դեպքում և բացառություններ չեն կարող լինել:

3. Արդյո՞ք համայնքապետարանների աշխատանքների պլանավորման և իրականացման խնդիրներ չեն առաջանա աշխատատեղերի կրճատման և համալրման ընթացքում, չէ՞ որ այդ գործընթացը կարող է հանգեցնել գործազրկության: Բանախոսը նշեց, որ այս գործընթացն անդառնալի և անհրաժեշտ է կարճ ժամանակում կազմակերպել: Հաստիքացուցակը ենթադրվում է, որ ստեղծվելու և հաստատվելու է հաջորդ տարի: Ըստ օրենքի՝ աշխատակիցները պետք է երկու ամիս առաջ ծանուցվեն: Այդ պահից սկսած համայնքապետարանի աշխատողները շարունակում են աշխատել՝ մինչև մրցույթի անցկացումը և աշխատատեղերի համալրումը:

(5) Արդյո՞ք հնարավոր չէ Վաղարշապատ խոշորացված համայնքի անվանումը կրկին վերանվանել Էջմիածին: Համայնքի ավագանու անդամների մեծամասնության կարծիքով՝ անհրաժեշտ է համայնքը վերանվանել Էջմիածին: Ըստ բանախոսի անգամ եթե այդ Վաղարշապատ անունը մնա օրենքը ընդունելուց հետո, համայնքը լիովին իրավասու է փոխելու անունը հետագայում:

(6) Արդյո՞ք նախատեսվում է բարձրացնել խոշորացված համայնքապետարանի աշխատակիցների աշխատավարձերը: Քննարկման մասնակիցներին հետաքրքրում էր, թե արդյո՞ք հնարավոր է բարձրացնել համայնքապետարանի աշխատակիցների աշխատավարձերը, եթե հաշվի առնենք, որ ծանրաբեռնվածությունն աճում է: Ըստ բանախոսի՝ միավորված համայնքի ավագանին է հաստատում աշխատողների աշխատավարձերը, այդ թվում՝ նաև հաշվի առնելով ծանրաբեռնվածությունը:

(7) Ի՞նչ կարգավիճակ են ունենալու կրթական հաստատությունները: Կրթական հաստատությունների ներկայացուցիչներին հետաքրքրում էր, թե արդյո՞ք կրթական հաստատությունները խոշորացումից հետո գտնվելու են համայնքի ենթակայության տակ, թե՞ շարունակելու ենթարկվել մարզպետարանին: Բանախոսը նշեց, որ կրթական հաստատությունները գործելու են՝ ինչպես նախկինում: Սակայն առաջիկա բարեփոխումների իմաստը նաև պետությունից կրթական և առողջապահական լիազորությունների փոխանցումն է համայնքներին:

(8) Համայնքների միավորումից հետո արդյո՞ք ավագանու անդամները ստանալու են աշխատավարձ: Ավագանու անդամներին հետաքրքրում էր, թե արդյոք նախատեսվում է աշխատավարձ համայնքի ավագանիների համար խոշորացումից հետո: Բանախոսը պարզաբանեց, որ ըստ գործող օրենսդրության՝ ավագանու համար աշխատավարձ նախատեսված չէ: Սակայն համայնքը իր բյուջեյում պետք է նախատեսի ավագանու գործուղման և իրենց լիազորություններից բխող այլ ծառայությունների ծախսերի փոխհատուցում:

(9) Ո՞րն է երաշխիքը, որ ևս մի քանի տարի հետո կառավարությունը որոշում չի կայացնի ապակենտրոնացման: Քննարկման մասնակիցներին հետաքրքրում, թե արդյո՞ք համայնքների միավորումը վերջնական որոշում է: Մասնակիցներից մեկը հարցրեց արդյոք կա՞ երաշխիք, որ մի քանի տարի հետո կառավարությունը կրկին որոշում չի կայացնի առանձնացնել համայնքները: Բանախոսը նշեց, որ ներկայիս որոշումը վերջնական է և անդառնալի և նախատեսվում է մինչև տարեվերջ ավարտին հասցնել համայնքների միավորման գործընթացը:

1.2.1.7 ՓԱՐԱՔԱՐ համայնք

Միավորվող համայնքների թիվը	8
Լսումների անցկացման օրը	16.09.2021.
Լսումների անցկացման վայրը	գ. Փարաքար
Մասնակիցների թիվը	44

(1) Ինչպիսի՞ն է համայնքների խոշորացման նախկին փորձը: Քննարկման մասնակիցները խնդրեցին ներկայացնել ոչ միայն դրական, այլև բացասական փորձը: Բանախոսը նշեց, որ մինչ այժմ խոշորացված 52 միավորված համայնքներում եղել են և՛ դրական և՛ բացասական փորձեր: Համայնքների հաջող գործունեության գրավականը, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի, առանձին վարչական ղեկավարների արդյունավետ և տքնաջան աշխատանքն է, որի դեպքում ձախողումն անհնար է:

(2) Որքանո՞վ է արդարացի, որ բնակչության թվով և բյուջեով ավելի մեծ համայնքները միավորվեն փոքրերի հետ և իրենց ֆինանսական ռեսուրսներն ուղղեն փոքր համայնքներին: Փարաքար համայնքի ներկայացուցիչները նշեցին, որ խոշորացման այս գործընթացը նման է կոլեկտիվացման և բոլորվին արդարացի չէ, որ 10 հազ. բնակչություն ունեցող Փարաքար համայնքը իր ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսները տրամադրի փոքր համայնքներին: Ըստ բանախոսի, այս գործընթացը էականորեն տարբերվում է կոլեկտիվացումից, քանի որ ռեսուրսների արդյունավետ կառավարման պարագայում, թե՛ խոշոր և թե՛ փոքր համայնքները համաչափ կզարգանան: Միավորման իմաստը ոչ միայն ռեսուրսների, այլև լիազորությունների վերաբաշխումն է: Վարչատարածքային բարեփոխումների հաջորդ փուլը ենթադրում է պետական կառավարման որոշ առանցքային լիազորությունների փոխանցումը համայնքներին, ինչն անհնար է առանց խոշորացման:

(3) Ինչո՞ւ է այնպիսի տպավորություն ստեղծվել, որ համայնքներն արդյունավետ չեն աշխատում: Համայնքի ղեկավարները նշեցին, որ կառավարության մոտ թյուր կարծիք կա, որ համայնքներն արդյունավետ չեն աշխատում: Ներկայումս Փարաքար միավորվող համայնքի բոլոր համայնքներն էլ արդյունավետ աշխատում են և որակյալ ծառայություն են մատուցում բնակչությանը: Այս պարագայում միավորումն անիմաստ է դառնում:

(4) Քննարկման մասնակիցների կարծիքով 8 համայնքների խոշորացումը տնտեսապես նպատակահարմար չէ իրականացնել: Պտղունք համայնքի ղեկավարն առաջարկեց 8 համայնքներից ձևավորել 3 փունջ, առաջնորդվելով բնակչության թվով և բնակիչների՝ համանման աշխարհընկալման տրամաբանությամբ: Մասնավորապես առաջարկվեց հետևյալ փնջային մոտեցումը՝

- 1-ին փունջ - Մուսալեռ, Պտղունք, Արևաշատ, Ոսկեհատ (որը նախատեսվում է միացնել Էջմիածին համայնքին) համայնքները միասին, Մուսալեռ կենտրոնով,
- 2-րդ փունջ - Փարաքարն առանձին,
- 3-րդ փունջ - Նոյակերտ, Բաղրամյան (Էջմիածնի շրջ.), Այգեկ, Մերձավան համայնքները միասին, Մերձավան կենտրոնով:

Միավորման այս մոտեցման դեպքում փնջերից յուրաքանչյուրում կլինի 10 հազ. բնակչություն: Ըստ քննարկման մասնակիցների՝ Ոսկեհատ համայնքն առավել փոխկապված է վերոհիշյալ 1-ին խմբի համայնքների, քան Էջմիածնի հետ, հետևապես անհրաժեշտ է միացնել այդ համայնքների փնջին:

Տպավորությունը հետևյալն է. Փարաքարը չի ցանկանում միավորվել մյուս 7 համայնքների հետ, որպեսզի իր եկամուտներից բաժին չհանի այլ համայնքների համար, իսկ մյուս 7 համայնքները չեն ցանկանում միավորվել Փարաքարի հետ, որպեսզի չկորցնեն իրենց ազդեցությունը և ինքնակառավարումը:

(5) Որո՞նք են լինելու վարչական ղեկավարների լիազորությունները: Համայնքի ղեկավարներին մտահոգում էր այն հարցը, թե խոշորացումից հետո արդյո՞ք կարողանալու են օպերատիվ կերպով լուծել համայնքի բնակիչներին հուզող, այդ թվում նաև սոցիալական խնդիրները: Ներկայումս վարչական ղեկավարները անհրաժեշտության դեպքում կարողանում են ինքնուրույն տնօրինել ֆինանսական ռեսուրսները և տեղում լուծել ծագած խնդիրները, օրինակ՝ որոշակի գումար հատկացնել համայնքի սոցիալապես անապահով խավին, որպեսզի կարողանան առողջության հետ կապված հարցերը հոգան: Բանախոսը նշեց, որ միավորումից հետո համայնքի ավագանին և համայնքի ղեկավարն են պլանավորելու բյուջեն և ծախսային մասը և կարող են նախատեսել նաև սոցիալական ծախսեր:

(6) Ինչո՞ւ հաշվի չեն առել բնակիչների կարծիքը խոշորացման վերաբերյալ և հանրաքվե չի անցկացվում: Գրեթե բոլոր համայնքներում կայացած հանրային լսումների ընթացքում բնակիչներին մտահոգում էր այն հարցը, թե ինչու՞ համայնքների խոշորացման գործընթացի վերաբերյալ բնակիչների կարծիքը հաշվի չի առնվում և հանրաքվե չի իրականացվում : Միևնույն ժամանակ, բնակիչները մոտ հարց առաջացավ հանրային լսումների նպատակահարմարության վերաբերյալ, եթե կառավարությունն արդեն որոշում է կայացրել: Ըստ քննարկման մասնակիցների՝ իրենց համայնքների բնակչության մեծ մասը դեմ է համայնքների խոշորացմանը: Բանախոսը ներկայացրեց, որ ամբողջ աշխարհում վարչատարածքային բարեփոխումներն իրականացնում է կառավարությունը՝ առաջնորդվելով ռեսուրսների արդյունավետ կառավարման գաղափարախոսությամբ և հանրային շահով:

(7) Արդյո՞ք ընտրված համայնքի ղեկավարը առաջնահերթ ուշադրություն չի դարձնի միայն իր համայնքին: Բնակիչներին մտահոգում էր, թե ի՞նչ երաշխիքներ կան, որ տվյալ համայնքի ղեկավարը խոշորացումից հետո չի հոգա նախ և առաջ իր համայնքի կարիքները:

1.2.2 Արարատի մարզ

1.2.2.1 ԱՐՏԱՇԱՏ համայնք

Միավորվող համայնքների թիվը	38
Լսումների անցկացման օրը	16.09.2021.
Լսումների անցկացման վայրը	ք. Արտաշատ
Մասնակիցների թիվը	61

(1) Ի՞նչ սկզբունքով է իրականացվել համայնքների միավորումը: Արտաշատ միավորվող համայնքի բնակիչներին հիմնական հարցերից մեկը այդքան մեծ թվով համայնքների միավորման սկզբունքն է: Ո՞րն է տրամաբանությունը, որ մի տեղ միավորվում են 5-7 համայնք, իսկ մեկ այլ տեղ (Արտաշատում) 38 համայնք: Որքանո՞վ է դա տնտեսապես և կառավարման արդյունավետության տեսանկյունից արդարացված: Ըստ բանախոսի արդյունավետ կառավարման դեպքում հնարավոր է կառավարել շատ ավելի մեծ թվով բնակավայրեր և այդ մասին է վկայում Վրաստանի փորձը:

(2) Որքանո՞վ է հավանական, որ ավագանու կազմում կընդգրկվեն այնպիսի անդամներ, որոնք ոչ միայն լավ ծանոթ են համայնքի խնդիրներին, այլև փորձառու են: Բնակիչներին հետաքրքրում էր, թե ո՞րն է երաշխիքը, որ համամասնական ընտրակարգի դեպքում՝ կուսակցական ցուցակներով կընտրվեն բանիմաց, խելացի և փորձառու ավագանու անդամներ, այն դեպքում, երբ այսօր կուսակցությունները հեղինակություն չեն վայելում: Ըստ բանախոսի՝ չնայած ընտրություններն իրականացվելու են կուսակցությունների առաջարկած ցուցակներով, վերջնական ընտրությունը կատարում են բնակիչները և դա է հիմնական երաշխիքը: Միևնույն ժամանակ մեծանում է կուսակցությունների պատասխանատվությունը, որը հաշվետու է բնակիչներին:

(3) Արդյոք իրականացվե՞լ է, կամ նախատեսվո՞ւմ է իրականացնել միավորվող համայնքների գործունեության մոնիտորինգ: Քննարկման մասնակիցներին հետաքրքրում էր, թե արդյոք նախատեսվում է իրականացնել միավորվող համայնքների գործունեության մոնիտորինգ և պատշաճ գույքագրում: Մասնավորապես պարզել, թե՝

1. ինչպե՞ս են հավաքագրվել և տնօրինվել սեփական եկամուտները մինչ խոշորացումը,
2. ի՞նչ ծրագրեր են իրականացվել համայնքներում,
3. ի՞նչ նյութատեխնիկական և գույքային բազա ունեն համայնքներ,
4. որքա՞ն պարտք և խնայողություններ ունեն համայնքները, և այլն:

Բանախոսը նշեց, որ այդ տեղեկությունները ներկայումս հասանելի են համայնքապետարանների կայքէջերում և հասանելի են որոշումներ կայացնողների համար: Միևնույն ժամանակ ուսումնասիրությունները շարունակվում են և միավորված համայնքների նկատմամբ վերահսկողությունն ավելի շատ էլ լինելու, որպեսզի համայնքապետարանը գործունեությունը լինի թափանցիկ և հաշվետու:

(4) Արդյո՞ք առանձին համայնքները ինչ-որ չափով չեն կորցնում իրենց լիազորությունները խոշորացումից հետո: Բնակիչներին մտահոգում էր այն հարցը, թե արդյո՞ք իրենց առանձին բնակավայրի ստատուսը և մասնակցությունը որոշումների կայացմանը չի նվազի: Բանախոսը նշեց, որ խոսքը գնում է իշխանության ստատուսի մասին: Այս դեպքում միավորված համայնքի համայնքապետարանը և ավագանին են որոշումներ կայացնում: Որոշումների կայացման ընթացքում ազդեցություն ունեն համայնքի ավագանին, իսկ նիստերին կարող են մասնակցել նաև վարչական ղեկավարները: Այգեզարդ համայնքի բնակիչներից մեկը նաև նշեց, որ իրենց համայնքը առանց այդ էլ անցել է բազմաթիվ խնդիրների միջով և այս խոշորացումը ժամանակավրեպ է, որ կհանգեցնի համայնքի զարգացման կասեցմանը:

(5) Ինչպե՞ս է տնօրինվելու համայնքային սեփականությունը խոշորացումից հետո: Քննարկման մասնակիցներին հետաքրքրում էր նաև, թե ի՞նչ սկզբունքով էին տնօրինվելու առանձին համայնքային սեփականությունը և գույքը: Բանախոսը նշեց, որ առանձին բնակավայրերում առկա գույքը տնօրինելու է միավորված համայնքը և ավագանին, ովքեր որոշում են կայացնելու օրինակ, գույքի օտարման կամ վարձակալության մասին:

(6) Համայնքների միավորումից հետո արդյո՞ք ավագանու անդամները ստանալու են աշխատավարձ: Ավագանու անդամներին հետաքրքրում էր, թե արդյո՞ք խոշորացումից հետո համայնքի ավագանիների համար նախատեսվում է աշխատավարձ: Բանախոսը պարզաբանեց, որ ըստ գործող օրենսդրության՝ ավագանու համար աշխատավարձ նախատեսված չէ: Սակայն համայնքը իր բյուջեյում պետք է նախատեսի ավագանու գործուղման և իրենց լիազորություններից բխող այլ ծառայությունների ծախսերի փոխհատուցում:

(7) Արդյո՞ք պարտադիր է որևէ կուսակցության անդամ լինել՝ ավագանու ընտրություններին մասնակցելու համար: Ներկայումս գործող ավագանու անդամներին հետաքրքրում էր արդյոք պարտադիր պայման է ավագանու անդամի համար ընտրություններին մասնակցել որևէ կուսակցության ցուցակով, կամ լինել կուսակցության անդամ: Պատասխանելով հարցին, բանախոսը նշեց, որ կուսակցության անդամ լինել պարտադիր չէ, սակայն այդ որևէ կուսակցության ցուցակում պետք է ընդգրկված լինել: Օրենքը թույլ է տալիս, որ կուսակցություններն իրենց ցուցակներում ընդգրկեն անկուսակցական անձանց:

(8) Արդյո՞ք նախատեսված են շարունակական վերահսկողություն միավորված համայնքի համայնքապետարանի գործունեության նկատմամբ: Բնակիչներին հետաքրքրում էր նաև այն հարցը, որ 38 համայնքի ոչ միայն կառավարումն է դժվար իրականացնել, այլև այդ համայնքապետարանների գործունեության վերահսկողությունը: Ի՞նչ վերահսկողության մեխանիզմներ են նախատեսված միավորված համայնքների գործունեության նկատմամբ: Բանախոսը նշեց, որ այդ վերահսկողությունն իրականացնում է կառավարությունը՝ մարզպետարանների միջոցով:

(9) Ի՞նչ քվոտաներ են նախատեսված ՏԻՄ ընտրությունների ժամանակ գենդերային բալանսի պահպանման համար: Հասարակական կազմակերպության ներկայացուցիչներին հետաքրքրում էր, թե արդյո՞ք նախատեսված են միջոցներ և քվոտաներ՝ ընտրությունների ընթացքում կանանց ներկայացվածությունն ապահովելու համար: Բանախոսը նշեց, որ օրենքում համապատասխան կարգավորումները նախատեսված են:

(10) Մինչև ՏԻՄ ընտրությունները և դրանից հետո մինչև աշխատակազմերի ձևավորումը առկա է մոտ 4-5 ամիս ժամանակ, որը որոշակի ռիսկեր է պարունակում: Բնակիչները մտահոգություն հայտնեցին, որ որոշ համայնքի ղեկավարներ և ավագանիներ այս ընթացքում հապճեպ իրականացնում են հողերի և գույքի օտարում: Այս պարագայում անհրաժեշտ է արդեն իսկ հիմա վերահսկել այդ համայնքապետերի աշխատանքը:

(11) Արդյո՞ք նախատեսված են քվոտաներ համամասնական ընտրությունների դեպքում, որպեսզի ներկայիս համայնքները հնարավորություն ունենան ներկայացված լինեն ավագանու կազմում: Բնակիչների կարծիքով համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում, բնակչության մեծ թվով համայնքներում ավագանին ավելի շատ ներկայություն կունենա, իսկ փոքր համայնքներում էլ ոչ մի ծրագիր չի իրականացվի:

1.2.2.2 ՄԱՄԻՍ համայնք

Միավորվող համայնքների թիվը	27
Լսումների անցկացման օրը	16.09.2021.
Լսումների անցկացման վայրը	ք. Մասիս
Մասնակիցների թիվը	91

(1) Ե՞րբ է նախատեսվում դադարեցնել ներկայումս գործող ավագանու անդամների, համայնքային ծառայողների լիազորությունները: Ավագանու անդամներին հետաքրքրում էր լիազորությունների դադարեցման հետ կապված հարցը: Մասնավորապես՝ որոշ համայնքներում ավագանիների ժամկետը լրանում է 2021թ.-ի սեպտեմբերին: Արդյունքում բավական երկար ժամանակ մինչև ընտրությունները համայնքը մնալու է առանց ավագանու: Այդ ընթացքում որոշակի ռիսկեր են առաջանում համայնքի համար կարևոր որոշումների կայացման, օրինակ՝ բյուջեի և այլ հարցերի: Բանախոսը նշեց, որ դժվար է կանխատեսել և ընտրությունները մեկ օր նշանակել բոլոր համայնքների համար և կա որոշակի ժամանակահատված, երբ համայնքը մնում է առանց ավագանու:

(2) Համայնքների միավորումից հետո արդյո՞ք ավագանու անդամները ստանալու են աշխատավարձ: Ինչպես և մյուս համայնքներում, այստեղ ևս ավագանու անդամներին հետաքրքրում էր, թե արդյո՞ք նախատեսվում է աշխատավարձ համայնքի ավագանիների համար խոշորացումից հետո: Բանախոսը պարզաբանեց, որ ըստ գործող օրենսդրության ավագանու համար աշխատավարձ նախատեսված չէ: Սակայն համայնքը իր բյուջեյում պետք է նախատեսի ավագանու գործուղման և իրենց լիազորություններից բխող այլ ծառայությունների ծախսերի փոխհատուցում:

(3) Եթե Արարատի մարզի համայնքները միավորվում են 4 համայնքների մեջ, ապա այդ դեպքում ո՞րն է լինելու մարզպետարանի դերը և լիազորությունները: Բանախոսը պատասխանելով հարցին նշեց, որ բարեփոխման հաջորդ փուլում նախատեսվում է պետական կառավարման և մարզպետարանի որոշ գործառույթներ փոխանցել համայնքներին, այդ թվում՝ կրթությունը և առողջապահությունը: Սակայն մարզպետարանը շարունակելու է գործել որպես տեսչական և խորհրդատվական մարմին, որը վերահսկելու է համայնքների գործունեությունը: Մարզպետարանին են մնալու նաև մի շարք լիազորություններ, օրինակ՝ պաշտպանությունը, արտակարգ իրավիճակները, մարզի զարգացման ծրագրերի մշակումը և իրականացումը:

(4) Եթե համայնքները նախքան խոշորացումը ունեն խնայողություններ, ապա ի՞նչ է լինելու այդ խնայողությունների հետ: Համայնքների ղեկավարներին հետաքրքրում էր հարց՝ արդյո՞ք իրենց համայնքների խնայողությունները մնալու և ծախսվելու են նույն բնակավայրերում միավորվելուց հետո, թե՞ այլ կերպ են տնօրինվելու: Բանախոսը նշեց, որ խոշորացումից հետո բոլոր համայնքների ակտիվները, այդ թվում՝ դրամական միջոցներն անցնելու են միավորված համայնքին, և միավորված համայնքն է տնօրինելու թե՛ եկամուտները, թե՛ ծախսերը: Հիմնական նպատակը ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարումն է: Միևնույն ժամանակ խոշորացման դրական կողմերից մեկն այն է, որ մեծ գումարը ավելի շատ ներդրումներ է բերում համայնք:

(5) Արդյո՞ք Մասիսի բոլոր 27 միավորվող համայնքները համամասնական ընտրության դեպքում կունենան ավագանու անդամ: Պատասխանելով հարցին բանախոսը նշեց, որ հավանականությունը քիչ է, որ բոլոր համայնքներից ներկայացված կլինեն, սակայն դա չի նշանակում, որ փոքր համայնքներին ուշադրություն չեն դարձնի:

(6) Ինչո՞ւ հաշվի չեն առել բնակիչների կարծիքը խոշորացման վերաբերյալ և հանրաքվե չի անցկացվում: Ինչպես և մյուս համայնքներում, այստեղ ևս բնակիչներն իրենց մտահոգությունը հայտնեցին, որ խոշորացումից առաջ իրենց կարծիքը հաշվի չեն առնում: Բանախոսը նշեց, որ Մասիսի տարածաշրջանում տարբեր ձևաչափերով հանդիպումներ են եղել համայնքի ղեկավարների և բնակիչների հետ խոշորացման հետ կապված:

(7) Արդյո՞ք վարչական ղեկավարը կարող է մասնակցել ավագանու նիստերին: Բանախոսը նշեց, որ վարչական ղեկավարը ավագանու նիստերին կարող է ներկա լինել և ներկայացնել իր բնակավայրի խնդիրները, սակայն քվեարկության իրավունք չունի:

(8) Արդյո՞ք սահմանված է որոշակի քվոտա, թե որ կուսակցությունից առնվազն ինչքան ավագանի պետք է ընտրված լինի, որ այդ կուսակցությունը անցնի շեմը: Պատասխանելով հարցին բանախոսը նշեց, որ ըստ նոր ընտրական օրենսգրքի ընտրություններն իրականացվելու են ըստ համամասնական ընտրակարգի և այդպիսի շեմ նախատեսված է: Միևնույն ժամանակ պարտադիր չէ, որ մեկից ավելի կուսակցություն ներկայացված լինեն ընտրություններին:

(9) Արդյո՞ք հնարավոր չէ, որ զինկոմիսարիատները կրկին տեղափոխեն Արտաշատից Մասիս, որպեսզի Մասիս համայնքն ունենա իր զինկոմիսարիատը: Հարցին պատասխանելով բանախոսը նշեց, որ այդպիսի նախագիծ պարբերաբար քննարկվում է կառավարությունում, քանի որ յուրաքանչյուր համայնք պետք է ունենա իր զինկոմիսարիատը: Բացի դա՝ ներկայումս Մասիս համայնքում կառուցվում է քաղաքացիների սպասարկման գրասենյակ, որտեղ բնակիչները տեղում կարող են ստանալ, կադաստրի, պետական ռեգիստրի և այլ ծառայություններ:

(10) Արդյո՞ք դժվար չէ կառավարել միավորված համայնքը: Համայնքի բնակիչներին հետաքրքրում էր այն հարցը, թե փոքր աշխատակազմով ինչպե՞ս է հնարավոր կառավարել խոշորացված և բնակչության թվով շատ մեծ համայնքը: Բանախոսը նշեց, որ կրճատվելու են հիմնականում որոշ վարչական և ոչ անհրաժեշտ հաստիքներ, միևնույն ժամանակ հաստիքացուցակը համալրվելու է նոր առավել անհրաժեշտ հաստիքներով: Իսկ կառավարման արդյունավետությունը բարձր է այն համայնքներում, որտեղ համայնքի ղեկավարները և ավագանին իրենց պարտականությունները պատշաճ կերպով կատարում են:

1.2.2.3 ՎԵԴԻ համայնք

Միավորվող համայնքների թիվը	17
Լսումների անցկացման օրը	17.09.2021.
Լսումների անցկացման վայրը	ք. Վեդի
Մասնակիցների թիվը	36

(1) Համայնքների խոշորացումից հետո ինչպես են տնօրինվելու միավորված համայնքների՝ նախկինում օտարումներից ստացված միջոցները և սեփական եկամուտները: Ինչպես և մյուս համայնքներում, Վեդիում կայացած հանդիպման ընթացքում ևս համայնքապետերին հետաքրքրում էր, թե ինչպես են տնօրինվելու համայնքների՝ օտարումից ստացված եկամուտները: Բանախոսը ներկայացրեց, որ օտարումից ստացված և մյուս եկամուտների բաշխման վերաբերյալ համատեղ որոշում են կայացնելու միավորված համայնքի ավագանին, համայնքի ղեկավարը, խորհրդակցելով վարչական ղեկավարների հետ:

(2) Ի՞նչ լիազորություններ ունեն վարչական ղեկավարները: Վարչական ղեկավարները հանդիսանում են համայնքապետարանի աշխատակիցներ, սակայն որոշումների կայացման ընթացքում նրանց ձայնը խորհրդատվական բնույթ ունի: Նրանք կարող են ներկայացնել իրենց բնակավայրի խնդիրները ավագանու նիստերի ընթացքում:

(3) Որքանո՞վ է հավանական, որ բնակչության թվով փոքր բնակավայրերը ներկայացված կլինեն միավորված համայնքի ավագանու կազմում: Խոշորացման գործընթացի վերաբերյալ համայնքի բնակիչներին մտահոգում էր նաև փոքր համայնքներից ավագանու ներկայացված լինելու հավանականությունը: Բանախոսը նշեց, որ Վեդիի դեպքում հավանականություն կա, որ բոլոր համայնքները ավագանու անդամ կունենա, ամեն ինչ կախված է ընտրությունների արդյունքներից: Միևնույն ժամանակ համայնքների խոշորացման Հայաստանյան փորձը վկայում է այն մասին, որ միավորված համայնքների ավագանին և համայնքի ղեկավարները առաջին հերթին ուշադրություն են դարձնում փոքր և տնտեսապես ավելի թույլ բնակավայրերին:

Խնդրի վերաբերյալ հանրային լսումների մասնակիցներից ոմանք կարծիք հայտնեցին, որ արդյո՞ք ճիշտ չէր լինի, որ առանձին բնակավայրի վարչական ղեկավարը ունենար ձայնի և քվեարկության իրավունք, եթե այդ բնակավայրից ավագանու անդամ չկա:

(4) Արդյո՞ք համայնքի ավագանու անդամը կարող է միաժամանակ աշխատել/նշանակվել որպես առանձին բնակավայրի վարչական ղեկավար: Բանախոսը նշեց, որ դրանք տարբեր գործառույթներ և լիազորություններ իրականացնող պաշտոնյաներ են և մեկ մարդը չի կարող միաժամանակ լինել համայնքի ավագանու անդամ և բնակավայրի վարչական ղեկավար:

(5) Արդյո՞ք արդեն իսկ միավորված համայնքներում իրականացվել է մոնիտորինգ՝ պարզելու համար հիմնական խնդիրները և ռիսկերը: Պատասխանելով հարցին բանախոսը նշեց, որ այդպիսի մոնիտորինգ իրականացնում է թե՛ կառավարությունը, թե՛ մարզպետարանները: Միևնույն ժամանակ անկախ մարմինների կողմից ևս իրականացվել են ուսումնասիրություններ: Մինչ այժմ կան համայնքների խոշորացման թե՛ դրական, թե՛ բացասական օրինակներ: Իրականում կան ռիսկեր, մասնավորապես շատ հավանական է, որ խոշորացված համայնքի աշխատակազմում ներգրավված լինեն մեծամասամբ Վեդի համայնքի բնակիչներ:

(6) Ի՞նչ քվոտաներ են նախատեսված ՏԻՄ ընտրությունների ժամանակ գենդերային բալանսի պահպանման համար: Հասարակական կազմակերպության ներկայացուցիչներից մեկը հարց բարձրացրեց ավագանու կազմում գենդերային բալանսի պահպանման հետ կապված: Բանախոսը նշեց, որ օրենքում համապատասխան կարգավորումները նախատեսված են, միևնույն ժամանակ նշեց, որ այդպիսի սահմանափակում չկա և Հայաստանի ցանկացած քաղաքացի կարող է առաջադրվել կուսակցության ցուցակով և մասնակցել ընտրություններին՝ անկախ նրանից կին է, թե տղամարդ:

(7) Ի՞նչ կարգավորումներ են նախատեսված, որպեսզի միավորվող բոլոր համայնքներից համայնքապետարանում լինեն աշխատակիցներ: Հանրային լսումների մի շարք մասնակիցներ մտահոգություն հայտնեցին, որ ապագա միավորված համայնքի աշխատակազմում աշխատանքի կընդունեն հիմնականում կենտրոնի (տվյալ դեպքում՝ Վեդիի) բնակիչների: Կստացվի այնպես, որ միավորված համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում աշխատատեղերը կկրճատվեն, իսկ Վեդիում՝ կավելանան: Պատասխանելով հարցին՝ բանախոսը նշեց, որ օրենքով սահմանված է, որ առանձին բնակավայրերը պետք է ունենան առնվազն երկու աշխատակից՝ վարչական ղեկավար և օպերատոր, միևնույն ժամանակ միավորված համայնքը, բնակավայրի կարիքներից ելնելով, կարող է սահմանել նոր հաստիքներ :

(8) Համայնքների միավորումից հետո արդյո՞ք ավագանու անդամները ստանալու են աշխատավարձ: Բնակիչներին հետաքրքրում էր, թե համայնքի խոշորացումից հետո ավագանու անդամների համար արդյո՞ք նախատեսվում է աշխատավարձ: Բանախոսը նշեց, որ ըստ գործող օրենսդրության ավագանու համար աշխատավարձ նախատեսված չէ: Սակայն համայնքը իր բյուջեյում պետք է նախատեսի ավագանու գործուղման և իրենց լիազորություններից բխող այլ ծառայությունների ծախսերի փոխհատուցում:

(9) Եթե համայնքների խոշորացումից հետո պետական կառավարման հիմնական լիազորությունները փոխանցվելու են համայնքներին, ապա ի՞նչ դերակատարում են ունենալու մարզպետարանները: Բանախոսը նշեց, որ լիազորությունների փոխանցումը ապագայի հարց է և իրականացվելու է հաջորդ փուլում: Մարզպետարանները շարունակելու են գործել և կատարել իրենց վերահսկողական, խորհրդատվական և մյուս գործառույթները:

(10) Խոշորացումից հետո ինչպե՞ս են քաղաքացիները ստանալու համայնքի ղեկավարի որոշումները: Բնակիչներին հետաքրքրում էր՝ արդյոք քաղաքացիները համայնքի ղեկավարի որոշումները ստանալու համար ստիպված են լինելու այցելել կենտրոն: Բանախոսը նշեց, որ համայնքի ղեկավարի որոշումների սկանավորված տարբերակը բնակիչը կարող է ստանալ իր բնակավայրում գործող վարչական կենտրոնից: Այս նպատակով բնակավայրերը պետք է համալրվեն համապատասխան տեխնիկայով: Իսկ վարչական ղեկավարը որոշում կայացնելու իրավունքով օժտված չէ:

(11) Արդյո՞ք պարտադիր է, որ ՏԻՄ ընտրությունների ժամանակ առնվազն երեք կուսակցություն ներկայացված լինեն: Բանախոսը նշեց, որ օրենքով նման սահմանափակում չկա և հնարավոր է ընդամենը մեկ կուսակցություն մասնակցի ընտրություններին իր ցանկով:

(12) Ի՞նչ կարգավիճակ են ունենալու կրթական և առողջապահական հաստատությունները: Բանախոսը նշեց, որ բարեփոխումների հաջորդ փուլը ենթադրում է մարզպետարանից այդ լիազորությունների փոխանցումը միավորված համայնքներին, սակայն դա բավական երկարատև գործընթաց և հաշվարկներ է ենթադրում:

(13) Եթե գործող գյուղապետերի պաշտոնավարման ժամկետն ավելի շուտ է ավարտվում, քան դեկտեմբերի 5-ը, արդյո՞ք մինչև այդ նոր ընտրություններ են լինելու: Նոր ընտրություններ չեն լինելու,

որոշ ժամանակ այդ համայնքապետը ավագանու որոշմամբ կարող է պաշտոնավարել որպես պաշտոնակատար:

1.2.2.4 ԱՐԱՐԱՏ համայնք

Միավորվող համայնքների թիվը	12
Լսումների անցկացման օրը	17.09.2021.
Լսումների անցկացման վայրը	ք. Արարատ
Մասնակիցների թիվը	31

(1) Արդյո՞ք ներկայիս Արարատ համայնքի աշխատակազմը կրճատվելու է: Արարատի համայնքապետարանի աշխատակիցներին հետաքրքրում էր աշխատակազմի հետագա ճակատագիրը: Մասնակիցներին մասնավորապես հետաքրքրում էին հետևյալ հարցերի պատասխանները.

1. Արդյոք նախատեսվո՞ւմ է վաղաժամկետ դադարեցնել աշխատակազմի լիազորությունները, թե՞ նույն կազմով շարունակելու են գործել:
2. Արդյոք նախատեսվո՞ւմ է հաստիքների համալրում խոշորացումից հետո՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքային ծանրաբեռնվածությունն ավելանալու է:

Պատասխանելով հարցերին բանախոսը նշեց, որ ընտրություններից հետո նախկին աշխատակազմի լիազորությունները կդադարեցվեն, միավորված համայնքի ավագանին կհաստատի նոր հաստիքացուցակը, որից հետո կանցկացվի մրցույթ և կընտրվեն նոր աշխատակիցներ: Բացի բնակավայրերում վարչական ղեկավարի և օպերատորի՝ օրենքով նախատեսված հաստիքներից համայնքը կարող է տեղերում նոր, բնակավայրերի համար անհրաժեշտ հաստիքներ ավելացնել:

(2) Քանի՞ տեղակալ կարող է ունենալ համայնքի ղեկավարը և ինչպե՞ս են նրանք ընտրվելու կամ նշանակվելու: Համայնքի ղեկավարի առաջին տեղակալն ընտրվելու է ավագանու կողմից, իսկ մյուսները նշանակվելու են համայնքի ղեկավարի կողմից:

(3) Ի՞նչ լիազորություններ են ունենալու մարզպետարանները: Ինչպես և մյուս համայնքներում, այստեղ ևս բնակիչներին հետաքրքրում էր, թե ինչ լիազորություններ են ունենալու մարզպետարանները խոշորացումից հետո: Բանախոսը նշեց, որ մարզպետարաններն առայժմ շարունակելու են գործել և կատարել իրենց վերահսկողական, խորհրդատվական և մյուս գործառույթները: Բարեփոխումների մյուս փուլում որոշ լիազորություններ, այդ թվում կրթությունը, առողջապահությունը, ճանապարհաշինությունը և այլն, կփոխանցվեն համայնքներին:

(4) Ինչո՞ւ է որոշում կայացվել ստեղծել Արարատի և Վեդիի առանձին համայնքներ: Բնակիչների մի մասի կարծիքով Արարատը արհեստական ստեղծված, արդյունաբերական քաղաք է և առավել նպատակահարմար է այն թողնել առանձին, իսկ Արարատի և Վեդիի բնակավայրերը միավորել Վեդի համայնքի կազմում: Հասկանալի չէ Արարատի նախկին շրջանի մասնատումը 2 մասի, երբ Արտաշատը և Մասիսը խոշորացվում են նախկին շրջանների սահմաններով:

(5) Արդյո՞ք համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը չի հակասում սահմանադրությանը: Արարատի համայնքապետարանի աշխատակիցներին մտահոգում էր այն փաստը, որ Արարատ համայնքի ղեկավարի լիազորությունները (ավարտվում են 2022թ.-ի նոյեմբերին) պետք է վաղաժամկետ դադարեցվեն: Ըստ նրանց՝ այդ որոշումը հակասում է սահմանադրությանը, որտեղ հստակ նշված է, որ համայնքի ղեկավարն ընտրվում է 5 տարի ժամկետով: Ըստ բանախոսի այստեղ որևէ հակասություն չկա և, ըստ ՏԻՄ օրենքի՝ կառավարությունը իրավասու է համայնքների խոշորացման դեպքում արտահերթ ընտրություններ նշանակել և այդ դեպքում գործող համայնքի ղեկավարի լիազորությունները դադարեցվում են:

(6) Եթե հոկտեմբերին ավագանու լիազորությունները դադարում են, իսկ ընտրությունները դեկտեմբերին են, ապա արդյո՞ք համայնքը մնում է առանց ավագանի: Բանախոսը նշեց, որ այդ կարճ ժամանակահատվածում ստացվում է, որ համայնքը կարող է մնալ առանց ավագանի: Քանի որ անհնար է ընտրությունների ժամկետն այնպես դնել, որ համապատասխանի բոլոր համայնքների ավագանու լիազորությունների դադարեցման ժամկետների հետ:

(7) Արդյո՞ք Արարատ միավորվող համայնքը կդառնա սահմանամերձ: Քննարկման մասնակիցները նշեցին, որ Երասխ համայնքը սահմանամերձ է: Արդյո՞ք սա նշանակում է, որ միավորումից հետո Արարատ համայնքը կճանաչվի սահմանամերձ և կօգտվի սահմանամերձ համայնքի արտոնություններից: Բանախոսը նշեց, որ «սահմանամերձի» կարգավիճակը կիրառվելու է ոչ թե ամբողջ համայնքի, այլ նրա առանձին բնակավայրերի վրա: Այս առումով՝ բան չի փոխվելու:

(8) Արդյո՞ք վարչական ղեկավարները ընտրվելու են, թե՞ նշանակվելու համայնքի ղեկավարի կողմից: Բանախոսը նշեց, որ վարչական ղեկավարը նշանակվելու են համայնքի ղեկավարի կողմից:

1.3 ԱՄՓՈՓՈՒՄ

1. Արմավիրի և Արարատի մարզերում անցկացված հանրային լսումների գլխավոր բացահայտումը համայնքների միավորման գործընթացի վերաբերյալ **բնակչության տեղեկացվածության և իրազեկվածության բացակայությունն** է:

2. Թեմային չեն տիրապետում անգամ այն մարդիկ, որոնց վրա անձնապես ազդեցություն կունենա համայնքների միավորման գործընթացը, այդ թվում՝ համայնքների ղեկավարները, ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակիցները: Նկատվում է, որ համայնքների միավորման վերաբերյալ **տեղեկացված են միայն այն համայնքների ղեկավարները, որոնք պատրաստվում են առաջադրվել որպես ապագա միավորված համայնքների ղեկավարի թեկնածու**:

3. Ընդհանուր առմամբ՝ համայնքների միավորման գործընթացի վերաբերյալ մարդկանց մի խմբի կարելի է բնորոշել որպես **շահերի բախում ունեցող անձանց խումբ**: Դրանք են՝ գործող համայնքապետերը, ավագանու անդամները, համայնքապետարանների աշխատակիցները և նրանց հետ փոխկապակցված անձինք (հարազատներ, բարեկամներ, ընկերներ): Այդ խմբի մարդիկ իրենց համայնքներում ունեն որոշակի ազդեցություն և իրենց համայնքների բնակիչների կարծիքի վրա ազդելու որոշակի հնարավորություններ: Այդ ազդեցությունը և հնարավորությունները օգտագործելով՝ նրանք կարողացել են համայնքների բնակչության շրջանում ձևավորել համայնքների միավորման գործընթացի վերաբերյալ բացասական կամ ընդդիմադիր կարծիք:

4. Համայնքների միավորման վերաբերյալ բնակչության տեղեկացվածության և իրազեկվածության պակասը նպաստում է, որպեսզի նրանք ընկնեն գործընթացի հետ շահերի բախում ունեցող տարբեր անձանց (գործող համայնքապետեր, ավագանու անդամներ, նրանց կողմնակիցներ) ազդեցության տակ և չկարողանան ձևավորել սեփական կարծիք: Թեմայի վերաբերյալ «անտեղյակ» հանրությունը հեշտությամբ է **ենթարկվում մանիպուլյացիաների**, տեղեկացվածության և իրազեկվածության պակասը տեղիք է տալիս տարբեր **սուբյեկտիվ դատողությունների** և **թյուր ըմբռնման**:

5. Համայնքների միավորման վերաբերյալ բնակչության կարծիքի վրա ազդում են նրանց անտեղյակությունը կամ որոշակի **կարծրատիպային մտածելակերպը** առ այն, որ միավորումից հետո իրենք կկորցնեն սեփական ինքնուրույնությունը և ինքնակառավարումը, դուրս կմնան իրենց բնակավայրի կառավարման վերաբերյալ որոշումների կայացումից: Մեծ շեշտադրություն է

կատարվում այն հարցի վրա, որ ամեն մի համայնքում ձևավորված է **սոցիալական փոխաջակցության տեղական մեխանիզմներ**, որոնցից օգտվում են համայնքի հատկապես սոցիալապես խոցելի խմբերը: Կարծիք կա, որ համայնքների խոշորացումից հետո փոխաջակցության այդ մեխանիզմները կխաթարվեն և խոցելի խմբերը կհայտնվեն ավելի դժվար վիճակում:

6. Հանրային լսումների արդյունքներից Խորհրդատուի տպավորությունը և սուբյեկտիվ կարծիքն այն է, որ համայնքների խոշորացման գործընթացի վերաբերյալ **հանրության ընդդիմադիր կեցվածքն**, այնուամենայնիվ, **այնքան էլ արմատական չէ** և **քիչ հնարավոր է, որ գործընթացն ուղեկցվի հանրային անհնազանդության ակցիաներով** (ինչպես, օրինակ, կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ): Դրա համար կան մի քանի պատճառներ.
   - Երկրի վարչատարածքային բարեփոխումների և համայնքների միավորման գործընթացը գտնվում է կես ճանապարհին և գրեթե բոլորը գիտակցում են, որ չի կարող երկրի մի մասում լինեն միավորված համայնքներ, իսկ մյուս մասում՝ առանձին համայնքներ: Անգամ ամենաընդդիմադիր տրամադրված մարդիկ իրենց կարծիքը ձևակերպում են հետևյալ բառերով. *«…խոշորացումը վատ բան չի, սակայն ա) «ոչ հիմա», բ) «մի 10-20 տարուց, երբ երկրի վիճակը կկայունանա», գ) «պետք է անել ավելի ուշ, մինչև կուսակցությունները կկայանան և կվերականգնեն իրենց հեղինակությունը» և այլն»:*
   - Համայնքների միավորման վերաբերյալ տեղեկատվության սփռումից հետո նկատվում է, որ շատերը լցվում են գիտակցությամբ, որ այս գործընթացն անձամբ իրենց և իրենց տնտեսական շահերին չի հարվածում, որի արդյունքում այդ մարդիկ ընդունում են ավելի չեզոք կեցվածք:

7. Համայնքների միավորման գործընթացի վերաբերյալ **հանրության բացասական վերաբերմունքը կամ ընդդիմադիր կեցվածքը զգալիորեն կթուլանա, եթե կառավարությունը հաշվի առնի նրանց որոշ խնդրանքներ և առաջարկներ**: Դրանք բարդ և անլուծելի խնդրանքներ չեն և վերաբերվում են հետևյալին.
   - Կոնկրետ բնակավայրը միավորել մեկ այլ համայնքի հետ, քան նախատեսված է հիմա: Օրինակ՝ ա) Արմավիրի մարզում Մյասնիկյան համայնքը ներառել Բաղրամյան և ոչ թե՝ Արմավիր միավորված համայնքի կազմում, բ) Մայիսյան համայնքը ներառել Մեծամոր և ոչ թե՝ Արմավիր միավորված համայնքի կազմում:
   - Համայնքի կենտրոն սահմանել մեկ այլ բնակավայր, քան նախատեսված է հիմա (օրինակ՝ Արաքս և Խոյ միավորված համայնքների դեպքերը):
   - Համայնքի անվանումը լինի այլ, քան նախատեսված է հիմա:

Առանց այն էլ հանրության շրջանում կա համոզմունք, որ համայնքների միավորման գործընթացում տեղական բնակչության կարծիքը ոչ ոք հաշվի չի առնում: ՀՀ Կառավարությունը ճիշտ կանի, որ համայնքների միավորման գործընթացի բուն էությունը և բովանդակությունը չխաթարող մի քանի խնդրանքներ և առաջարկներ ընդունի, որպեսզի նվազեցնի տեղերում ձևավորված դժգոհությունների (անկախ դրանց օբյեկտիվ կամ սուբյեկտիվ բնույթից) ծավալը և որոշակիորեն փոխի հանրության վերաբերմունքը համայնքների միավորման գործընթացի նկատմամբ: